Ազգ
Azg
6 ԱՊՐԻԼ 2013 ՇԱԲԱԹ 54(5137)
ISSN: 1829-1651

# Թմրանյութեր Ադրբեջան տարանցվում են նաեւ «Լեռնային Ղարաբաղի՞ց»

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի փոխվարչապետ Ալի Հասանովը հայկական Սփյուռքին մեղադրել է իր երկրի նկատմամբ «թմրանյութային ահաբեկչության» մեջ: Նրա խոսքերով, թմրանյութերն Ադրբեջան են տարանցվում չորս երթուղիներով՝ Աֆղանստան-Պակիստան-Իրան-Ադրբեջան, Աֆղանստան-Իրան-Ադրբեջան, Աֆղանստան-Կենտրոնական Ասիա- Ադրբեջան, ինչպես նաեւ՝ Աֆղանստանից Իրանի միջոցով՝ «օկուպացված տարածքներ»: Հասանովը հայտարարել է, որ «դրանում խառն է համաշխարհային հայության մասը, քանի որ հայերը... փորձում են փչացնել մեր գենոֆոնդը եւ ապագան» (տես՝ http://news.day.az/politics/394046.html):

Հասանովի «տրամաբանությամբ», հայկական Սփյուռքը «կապված է Աֆղանստանի եւ Պակիստանի հետ» այն դեպքում, երբ այս վերջինը նույնիսկ պաշտոնապես չի ճանաչել Հայաստանի անկախությունը, գրեթե կրոնապետություն է եւ միջազգային ատյաններում հանդես է գալիս բացառապես Ադրբեջանի օգտին: Պետք է մոռանալ նաեւ, որ պատերազմի տարիներին թե՛ Աֆղանստանը, թե՛ Պակիստանը ռազմական եւ նյութատեխնիկական օգնություն են ցուցաբերել Ադրբեջանին:

Բայց ավելի «օրիգինալ» է Հասանովի միտքը, որ «կա եւս մի երթուղի՝ Աֆղանստան-Իրան-«օկուպացված» Լեռնային Ղարաբաղ, որը միջազգային հաշվետվություններում ներառված չէ»: Կրկնենք. Հասանովը խոսել է դեպի Ադրբեջան թմրանյութերի տարանցման երթուղիների մասին: Այստեղից հետեւում է, որ «Աֆղանստան-Իրան-Լեռնային Ղարաբաղ երթուղով էլ թմրանյութ է մատակարարվում» Ադրբեջան:

Բայց չէ՞ որ Ադրբեջանը եւ Լեռնային Ղարաբաղը բաժանված են, ինչպես Բաքվում են սիրում ասել՝ «ռազմաճակատային» գծով, եւ կողմերի միջեւ ոչ մի շփում գոյություն չունի:

Տես էջ 2

# «Փակ շուկա». Քաղաքապետարանում սպասում են մշակույթի նախարարության եզրակացությանը



**Երեւանի համայնքային բյուջեն այս տարի 23 միլիարդ դրամ կհատկացնի կանաչապատման, նորոգման, հիմնանորոգման եւ վերանորոգման աշխատանքների համար: Աշխատանքներ կկատարվեն բոլոր համայնքներում՝ այդ կերպ նպաստելով մայրաքաղաքի համաչափ զարգացմանը: Վստահեցնում փոխքաղաքապետ Կամո Արեյանն է: Նա շեշտում է, որ առաջնային խնդիրը փողոցների վերանորոգումն է: Այս տարի կշահագործվի 18 ֆուտբոլային դաշտ, կավարտվի նաեւ Իսակով-Լենինգրադյան եւ Ուլնեցի-Ռուբինյան ավտոճանապարհների կառուցումը: Բնակարանային շինարարությունը նույնպես քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում է: Այս տարի շահագործման կհանձնվի 226 բնակարանով երկու շենք, որտեղ կբնակվեն չորրորդ աստիճանի վթարային շենքերի բնակիչները:**

**«Փակ շուկայի» խնդիրն էլ շարունակում է Երեւանի քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում մնալ: Մայրաքաղաքի գլխավոր պատասխանատուներն այժմ սպասում են մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի եզրակացությանը շուկայում ընթացող շինարարության վերաբերյալ: Կամո Արեյանը շեշտում է, որ միայն լիազորված մարմնի եզրակացությունից եւ առաջարկից հետո իրենք կքննարկեն հետագա նախագծերը: Փոխքաղաքապետը հիշեցրեց, որ իրենք տվել են շինթույլտվություն հիմքերի ամրացման համար: Իսկ ստորգետնյա հատվածի կառուցման համար թույլտվություն տվել են միայն այն բանից հետո, երբ մշակույթի նախարարությունը դրական եզրակացություն է տվել: «Սակայն կառուցապատողը դուրս է եկել աշխատանքների շրջանակներից եւ երկու անգամ քաղաքապետի որոշմամբ ենթարկվել վարչական տույժի», ասաց Կամո Արեյանը:**

**Անդրադառնալով հինգշաբթի կառավարության նիստի ժամանակ ստեղծված անհարմարությանը, երբ նախկին քաղաքապետ, ներկայիս կապի եւ տրանսպորտի նախարար Գագիկ Բեգլարյանն Արեյանին «բռնացրել» էր՝ ասելով, որ կառուցապատողների կողմից տուժած մարդիկ շատ կան ու ինքը պատրաստ է անգամ հասցեներ տալ, Արեյանն ասաց, որ կառավարության նիստերին մասնակցում է քաղաքապետի հանձնարարությամբ, պատրաստված է ու կոմպետենտ իր ոլորտում ծառայական պարտավորություններին առնչվող հարցերին: «Վարչապետի տված հարցին՝ կա՞ն նման ռիսկեր, տվել եմ համարժեք պատասխան: Տարբեր մտքերի փոխանակությունից հետո խնդրել եմ պարզաբանում տալ, առաջարկել եմ տարանջատել նման ռիսկային գոտիները երկու խմբի՝ գոտիներ, որոնք վերաբերում են իրացման գոտուն, որտեղ չկա քաղաքացու գումարի գանձման խնդիր, այլ այսօր կա պայմանագրային պարտավորությունների ժամկետների խախտում, եւ գոտիներ, որոնք դուրս են իրացման գոտուց, երկու սուբյեկտների քաղաքացիաիրավական հարաբերություն. մարդիկ, մասնավոր շենքեր են կառուցել, ունեցել են գործարքներ անհատ քաղաքացիների հետ, ծախողվել են այդ գործարքները, եւ նրանք պարտավոր են դատական կարգով պարզել իրենց հարաբերությունները: Սա ռիսկի առանձին խումբ է, ինչը վերաբերում է ավելի շատ զեկուցվող հարցերին», ասաց Արեյանը՝ հավելելով, որ նախկին վերադասի հակադարձումը չի պատրաստվում մեկնաբանել, քանի որ դրա պարտավորությունը չի զգում:**

Հ. Հ.

# Կոնգրեսական Կոհենը խոստանում է Թուրքիային

**«Հայկական սփյուռքը նոր խարդավանքների է պատրաստվում ԱՄՆ-ի հետ հարաբերությունների զարգացման ջանքեր գործադրող Թուրքիայի դեմ: Բուռն գործունեություն է ծավալում, որ 1915-ի իրադարձությունների 100-րդ տարելիցին հասնի այսպես կոչված Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Որ հայերը մեկ անգամ եւս օրակարգ են բերելու ցեղասպանության հարցը, փորձագետները չեն կասկածում»:**

**Այս տողերը կայքէջում ապրիլի 4-ին գրել է թուրքական habera.com-ը, ապա եւ շարունակել. «ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի դեմոկրատ անդամ, Կոնգրեսի թուրք-ամերիկյան բարեկամության խմբի ակտիվիստ Սթիվ Կոհենը օրերս պատասխանեց «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի հարցերին: Կոհենն ասաց, որ թուրքական կողմը ցանկանում է ԱՄՆ-ի հետ ստորագրել երկկողմ առեւտրական պայմանագիր, սակայն դրան ամերիկյան որոշ շրջանակներ բացասաբար են մոտենում: Նա միաժամանակ զգուշացրեց, որ ԱՄՆ-ում ազդեցիկ լոբբիստական կազմակերպություն ունեցող հայերը 1915-ի իրադարձությունների 100-րդ տարելիցին հավանաբար Հայոց ցեղասպանության բանաձեւ կմտցնեն Կոնգրեսի օրակարգ: Կոհենը նշեց, որ ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների առումով բավականին բացասական այս գործընթացը կանխելու համար կանի բոլոր հնարավորը»:**

Հ. Զ.

# «Կցանկանայի, որ աճյունս ամփոփվեր խաչքարի տակ»

Այս խոսքերը պատկանում են Հռոմի նորընտիր պապ Ֆրանցիսկին: Նա դրանք ասել է դեռեւս Արգենտինայում, նախքան ընտրվելը, երբ Բուենոս Այրեսի կարդինալն էր: Նշելով երեկվա համարում այդ մասին՝ «Միլիեթը» միաժամանակ տեղեկացնում է, որ Ֆրանցիսկ պապի խոսքերի մասին վկայել է Հայ առաքելական եկեղեցու Արգենտինայի եւ Չիլիի թեմի առաջնորդ Գիսակ արք. Մուրադյանը:

Թուրքական թերթն այնուհետեւ հիշեցնում է, որ 2006-ին Ֆրանցիսկ պապը Թուրքիայից պահանջել է առանց նախապայմանի ճանաչել Հայոց ցեղասպանությունն ու ներողություն խնդրել, իսկ 2010-ին՝ ցեղասպանության 95-րդ տարելիցի առթիվ Բուենոս Այրեսում տեղադրված խաչքարի բացմանն ասել է. «Երանի աճյունս հողին հանձնվեր այս խաչքարի տակ»:

Հ. Զ.

# Նախագահ Գյուլ. «Շահարկման ենթակա խնդիրները անհարիր են բարեկամական հարաբերություններին»

Օրերս Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը եղել է Լատվիայում եւ Լիտվայում: Բալթյան այս երկրների ղեկավարության հետ հանդիպումների ավարտին նա, ինչպես ապրիլի 4-ին նշել է «Սթար» թերթը, թուրք լրագրողներին ասել է, որ հանդիպումներում ինքը արծարծել է շահարկման ենթակա այն խնդիրները, որոնք անհարիր են բարեկամական եւ դաշնակցային հարաբերություններին:

Լրագրողների՝ «որո՞նք են այդ խնդիրները» հարցին Գյուլը պատասխանել է. «Երբեմն այլ երկրների խորհրդարանները 1915-ի իրադարձություններին վերաբերող որոշումներ են ընդունում: Թեեւ 2005-ին համանման որոշում ընդունելու փորձ արվեց նաեւ այս երկրի (Լիտվայի) խորհրդարանում, սակայն կառավարությունը բուռն կերպով հակադրվեց: Ավելին, միաժամանակ հայտարարեց, որ իրենք մեծ կարեւորություն են տալիս Թուրքիայի հետ դաշնակցային եւ բարեկամական հարաբերություններին: Այս իրողությունը երկու կողմերն էլ գիտակցում են»: Վերջում Աբդուլլահ Գյուլը ավելացրել է, որ Լիտվան ու Լատվիան մեծապես աջակցում են Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին:

Հ. Զ.

# Երբվանից է մարդն ապրել Հրազդանի կիրճում



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Հրազդանի ձորը մարդկության ամենաառաջին եւ ամենահին բնակատեղիներից է: Անհիշելի ժամանակներից կյանք է եռացել կիրճում: Այստեղ եղած բնակատեղիները դարեր շարունակ հսկել են հաղորդակցության առափնյա ուղին՝ ծաղկելով եւ մեծ օգուտ քաղելով հարմար դիրքից:**

**Հրազդանի ձորի տարբեր շերտերը կրում են Երեւանի ողջ տարածքի՝ հազարամյակների խորքը գնացող կյանքի ու կենցաղի հետքերը: Հրազդանի կիրճում գտնված բազմաթիվ քարայր-կացարաններում մարդիկ բնակվել են Սառցի ժամանակաշրջանից, հետագայում ջերմացման ժամանակ դուրս են եկել քարայրներից եւ բացօթյա կացարաններ կառուցել հենց քարայրների հարեւանությամբ, հետո անցել պատմության բոլոր ժամանակահատվածներով՝ ձորափերում թողնելով բերդերի, բնակատեղիների, կիկլոպյան ամրոցների, դամբարանադաշտերի հետքերը՝ ուրարտական փառավոր պետության վկայագրերից սկսած մինչեւ՝ Ջրագյուղի անապատ», բանավոր զրույց առասպելներից մինչեւ գրավոր կավե սալիկներով արքունի դիվանատուն:**

**Մեզ փոխանցված հսկա ժառանգությունը կարող է խոսել մի լեզվով, որը կոչվում է մշակույթի լեզու:**

Տես էջ 3

# «Հայկական անկյուն» Միսլատայում

«Մադրիդը՝ Հայաստանի մայրաքաղաք»,- հայտարարեց Կիլիկիայի վերջին թագավոր Լեւոն VI-ը, ում Արագոնի եւ Կաստիլա լա Մանչայի թագավորները, փրկագին վճարելով Եգիպտոսի սուլթանին, բերում են Իսպանիա եւ նվիրում նրան Մադրիդի ու Վալյադոլիդի տարածքները:

Մոտ 700 տարի առաջ տեղի ունեցած այս հետաքրքրաշարժ եւ գրեթե մոռացության տրված դեպքից հետո եւս մի քանի արժանահիշատակ իրադարձություններ են տեղի ունեցել Իբերիա թերակղզու տարածքում, որոնցում առկա է հայկական հետքը այս արեւաշատ երկրում: Արեւաշատ եւ, անհասկանալիորեն, հայաքիչ երկրում, որտեղ, ի զարմանս հնագիտության, հայտնաբերված ամենահին մարդկային կմախքները պատկանում են արմենոիդներին:

Ահա այսպես, Մեծ գաղթից ի վեր Հայկական լեռնաշխարհից գաղթած մարդկային ցեղերը հաստատվում են թերակղզում՝ իրենց հետ բերելով պղնձաձուլության հնագույն արվեստը, որից ստացած գույնի հետեւանքով հնագետները նրանց անվանել են «կանաչ մարդիկ»: Սակայն ո՛չ այս հնագիտական փաստը, ո՛չ բասկերի եւ բազմաթիվ իսպաներեն բառերի հայկական արմատ ունենալու հենքը, ո՛չ Մադրիդի առաջին եւ միակ «սենյոր Լեւոնի» հանդգնությունը, ո՛չ Կադիսում 16-րդ դարում հիմնված հայկական «Հիսուս Նազովրեցի» եղբայրությունը եւ ո՛չ էլ ներկայիս հայկական կազմակերպությունները ի զորու չեղան Իսպանիայում հայկական դասական համայնքի ստեղծմանը:



Սա, թերեւս, ժամանակի եւ քանակի հարց է, որը լուծելու համար, անշուշտ, որակ է հարկավոր: Այնպիսի որակներ, ինչպիսիք են Արա Մալիկյանը, Գեգել Մազմանյանը, Ջիվան Միրզոյանը, Լիլիթ Մանուկյանը կամ հենց ինքը՝ Լեւոն արքան: Որակներ, որոնք ի զորու են հանդգնաբար եւ վստահաբար հայտարարել՝ ովքե՛ր ենք մենք, որտեղի՛ց ենք գալիս եւ ո՛ւր ենք գնում: Վերջիններս անհատականություններ են, որոնք կարող են հատկանշել իսպանահայության ուղին՝ ի նպաստ հայ ինքնության պահպանման ու ճանաչման:

Հենց այս նպատակն է հետապնդում «Արարատ» հայկական միությունը, որի հերթական նախաձեռնությունը գումարվեց վերը նշված պատմական իրադարձություններին եւ վերջին 10-ամյակում Իսպանիայում ի կատար ածված հայապահպան գործունեությանը՝ հայկական միությունների ու դպրոցների հիմնում, հուշարձանների տեղադրում, պարբերականի հրատարակում եւ այլն: Այսպես են ստեղծվել դասական համայնքները՝ մեծ ու փոքր նախագծերով՝ հավասարիմ ազգապահպան նպատակին: Հենց այս նպատակին պիտի ծառայի նաեւ «Հայկական անկյունը», որի բացումը տեղի ունեցավ մարտի 27-ին Միսլատայի Օտարերկրացիների ինտեգրման կենտրոնում (AMICS): Վիլյամ Սարոյանի անվան այս հայկական կենտրոնը, որն ընդգրկում է 7 լեզուներով 150-ից ավելի հայագիտական գրքեր, ֆիլմադարան եւ երաժշտացանկ, նվիրվում է մեծանուն գրողի 105-ամյակին: Այն մի կտոր Հայաստան է այս օտար հողի վրա, որտեղ հայությունը կարող է վերագտնել իր ակունքները, հայ մշակույթն ու գրական հարուստ ժառանգությունը, հանդիպման մի կետ, որտեղ մշտապես կիշխեն հայկականությունն ու անաղարտ հայերենը: Ինչպես հենց բացման արարողության ժամանակ, երբ կենտրոնի պատերը գրկել էին հայ պատմագիտության ու գրականագիտության դեմքերին՝ Արտավազդ II թատերագիր արքայից մինչեւ նույն ինքը Վիլյամ Սարոյանը: Նրանց նկարներն ուղեկցվում էին կենսագրական տվյալներով՝ հայերեն եւ իսպաներեն:

«Հայկական անկյուն»-ի բացման համար քաղաքապետարանից ներկա էր միջազգային հարաբերությունների խորհրդական Խոսե Ռամոն Բոսկան, որը կենտրոնի տնօրեն Լուիս Ռեալի հետ ստանձնեց բացման արարողությունը: Խոսե Ռամոն Բոսկան հայտնեց, որ «ամեն անգամ մի անակնկալ սպասում ես մեր քաղաքի հայերից, որի համար անչափ շնորհակալ եմ «Արարատ» հայկական միությանը եւ զարմացած նրա անսպառ էներգիայով ու ցանկությամբ, որով մեր քաղաքը դառնում է ավելի գունեղ ու բազմամշակույթ»: Իսկական անակնկալ տեղի ունեցավ հենց արարողության ժամանակ, երբ կենտրոնի տնօրեն Լուիս Ռեալին նվիրվեց Աշոտ Արծրունու «Հայ Ժողովրդի պատմություն» («Historia del Pueblo Armenio») գիրքը:



Բացմանը ներկա էր նաեւ իսպանահայության եւ իսպանական հասարակության սիրելին դարձած Լիլիթ Մանուկյանը, որն այդչափ գրքերի մեջ կարծես մի քայլող հանրագիտարան լիներ: Հավաքված հայերը մեծ հպարտությամբ էին ներկայացնում Լիլիթին՝ իսպանագիտության եւ համաշխարհագիտության ամենագետին, ում նույնպես մրցանակ էր սպասվում «Արարատ» միության կողմից: Ստանալով նվերը՝ Լիլիթը խոստացավ, որ ցանկություն ունի մասնակցել «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» հեռուստախաղին եւ վաստակած ողջ գումարը նվիրաբերել հայկական միությանն ու դպրոցին:

Բացման արարողության վերջում վավերագրական ֆիլմ ցուցադրվեց Հայաստանի մասին, եւ ներկաներին առաջարկեցին ճաշակել հայկական ուտեստներ:

Մեզ մնում է միայն հաջողություն մաղթել Լիլիթ Մանուկյանին, իսկ «Հայկական անկյուն»-ին ցանկանալ, որ շուտով վերածվի հայագիտության խոշոր կենտրոնի:

**ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**Վալենսիա (Իսպանիա)**

ԸՆԴԱՌԱՋ

# Անձրեւն Ազատության հրապարակում

**Անձրեւը թե հիասթափությունը երեկ սակավամարդ էին դարձրել Ազատության հրապարակը, որտեղ րաֆֆիականներն, այնուամենայնիվ, հանրահավաք արեցին: Այս հանրահավաքը ցույց էր տալիս, որ ապրիլի 9-ին հազիվ թե ստվար բազմություն հավաքվի Րաֆֆու այլընտրանքային երդմնակալության ժամանակ: Սակայն տրամադրությունները, որ մարում են, կարող են արթնանալ ընդամենը մեկ ամիս հետո, քաղաքային ընտրություններին եւ դրան հաջորդող ժամանակի մեջ:**

**Չնայած անձրեւին՝ երեկ Րաֆֆի Հովհաննիսյանը ելույթ ունեցավ եւ ապրիլի 9-ին ժամը 11-ին մարդկանց կանչեց Ազատության հրապարակ՝ նշելով, որ Սփյուռքից, Արցախից եւ Հայաստանի մարզերից մարդիկ են գալու՝ «միասին պատասխանատու երդում տալու, միասին նոր Հայաստանի ողնաշարը, արյունը, դրոշակը եւ Սահմանադրությունը դառնալու ապրիլի 9-ին, ուղիղ ժամը 12-ին»: Իսկ նույն օրը ժամը 17-ին միասին քայլելու են «հայրենիքի համար, նոր Հայաստանի ուխտով, եւ գնալու ենք վերադարձնելու իշխանությունը ժողովրդին»: Ր. Հովհաննիսյանը հայտարարեց, որ այդ օրն ինքը հանդես է գալու ծրագրային ելույթով, դասադուլի եւ գործադուլի կոչ արեց, իսկ իշխանությանն էլ խոսք ուղղեց, որ Արցախից, սահմաններից բանակի ստորաբաժանումներ չբերեն այդ օրը Երեւան:**

**Ի դեպ, «Ժառանգություն» կուսակցության՝ քաղաքապետարանին ներկայացված ապրիլիննյան երթի հայտը Պռոշյան-Բաղրամյան փողոցներով՝ մերժվել է: Սակայն քաղաքապետարանն առաջարկում է երթն անցկացնել այլ երթուղով՝ Ազատության հրապարակ-Հյուսիսային պողոտա-Աբովյան փողոց-Հանրապետության հրապարակ-Վ. Սարգսյան փողոց-Շահումյան հրապարակ-Վ. Սարգսյան փողոց-Հանրապետության հրապարակ-Նալբանդյան փողոց-Թումանյան փողոց-Ազատության հրապարակ:**

**Մ. Խ.**

# Սոցհարցումները քաղաքապետի լավ մեկնարկային դիրք են ցույց տալիս Տարոն Մարգարյանի համար

**Ամենայն հայոց սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը հերթական սոցիոլոգիական հարցումի արդյունքներն է ներկայացրել, ըստ որոնց ընտրարշավի մեկնարկին լավ դիրքում են ՀՀԿ ցուցակն ու նրա գլխավորող Տարոն Մարգարյանը, նրանց ձայն կտա ընտրողների 36,5 տոկոսը: Վարդան Օսկանյանի գլխավորած ԲՀԿ ցուցակի օգտին կքվեարկի հարցվածների 3,8 տոկոսը, էլի այդքան «Բարեւ, Երեւանին» են ձայն տալու: Հարցվածների 22, 1 տոկոսը դեռ չի կողմնորոշված: Այս պատկերին, ըստ սոցիոլոգի, նպաստել է նաեւ այն իրողությունը, որ ընդդիմադիրները միասնական հանդես չեն եկել, իսկ եթե հանդես գային՝ հարցվածների 55 տոկոսը նրանց ձայն կտար: Հիշեցնենք, որ Րաֆֆի Հովհաննիսյանի մասով Ահարոն Ադիբեկյանի թվերը նախագահական ընտրությունների արդյունքների առումով այնքան էլ իրական չէին:**

# Զոհրաբ Զոհրաբյանի հետ տեղի ունեցածի մասին

**Նախորդ օրը վթարի էր ենթարկվել նախկինում ՀՀԿ-ական պատգամավոր, վերջին շրջանում ԲՀԿ-ին անդամագրված Զոհրաբ Զոհրաբյանը, որը տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն: Զոհրաբյանը եղել է իր մեքենայով, որին բախվել է այլ մեքենա: Երեկ ԶԼՄ-ները բավական դիտարկումներ արեցին այս փաստով՝ փորձելով տեղի ունեցածը կապել վերը նշված քաղաքական պատճառահետեւանքային թելով եւ քաղաքական պատվեր որոնել: Բանն այնտեղ հասավ, որ Զոհրաբյանի մամլո քարտուղար Նաիրա Հարությունյանը երեկ հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ոչ հերքել, ոչ հաստատել էր այդ պատճառահետեւանքային կապը: Ըստ ոստիկանական հաղորդագրության՝ մեկ օր առաջ, գիշերը Երեւանի Հ. Քոչար-Փափազյան փողոցների խաչմերուկի մոտակայքում բախվել են «Օպել Վեկտրա» մակնիշի 34 VU 251 պետհամարանիշի եւ «Ջերրի» մակնիշի 09 UL 425 պետհամարանիշի ավտոմեքենաները, ինչի հետեւանքով 1990 թ. ծնված Գ. Դավթյանը, 1966 թ. Ա. Դույդույանը եւ 1966 թ. ծնված Զոհրաբ Զոհրաբյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Արմենիա» ԲԿ, որտեղ նրա վիճակը գնահատվել է ծանր, Ա. Դույդույանի եւ Գ. Դավթյանի վիճակները՝ միջին ծանրության, իսկ 1979 թ. ծնված Ա. Սարյանը տեղափոխվել է «Սբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն, որտեղ նրա վիճակը գնահատվել է միջին ծանրության:**

# Թմրանյութեր Ադրբեջան տարանցվում են նաեւ «Լեռնային Ղարաբաղի՞ց»

*1-ին էջից*

Որպեսզի «հայկական դավադիր Սփյուռքն Աֆղանստան-Պակիստան-Իրան-ԼՂ երթուղով թմրանյութ տարանցի» Ադրբեջան, դրանում «պետք է որ ներգրավված լինի նաեւ» Ադրբեջան-ԼՂՀ զորքերի շփման գծի ադրբեջանական հրամանատարությունը: **Այլապես Սփյուռքը չի կարող «իրականացնել ադրբեջանական գենոֆոնդը եւ ապագան փչացնելու իր ծրագիրը»:**

Հասկանո՞ւմ է Ադրբեջանի փոխվարչապետը, թե ինչ սոսկալի մեղադրանք է հնչեցրել սեփական երկրի զինվորականության հասցեին: Պատկերացնո՞ւմ է նա, որ այդ կերպ երկրի «գենոֆոնդը եւ ապագան փչացնելու» մեջ մեղավոր է ճանաչվում նաեւ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար եւ իր անմիջական շեֆ Իլհամ Ալիեւը:

Ինչպե՞ս կարձագանքի Իլհամ Ալիեւն այդ մեղադրանքներին: Ունի՞ նա ենթակաների ասածը վերլուծելու եւ համապատասխան եզրակացություններ անելու ընդունակություն: Մեզ դա քիչ է հուզում: Կարեւոր ենք տեսնում ընդգծել Ալի Հասանովի հիմնական հիմարությունը: Թմրանյութերի թեմայով նա այդքան բաց չէր խոսի, եթե նպատակ չունենար շոշափելու Իրանի հետ 132 կմ՝ Ադրբեջանի կողմից չվերահսկվող սահմանի թեման:

Հասանովինն այս անգամ էլ «ստացվել է ինչպես միշտ»: Նա փաստորեն խոստովանել է, որ ադրբեջանական կողմը Իրանի հետ սահմանը վերահսկելու եւ թմրանյութերի տարանցումը կանխելու հնարավորություն չունի: Կամ՝ ցանկություն, քանի որ թմրաբիզնեսն ամբողջ աշխարհում ամենաեկամտաբերն է:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Թանկ ենք վճարում

Վաղուց է հայտնի, որ գովազդն ամեն տեսակի բիզնեսի առաջընթացն ապահովող ամենազորեղ միջոցներից է: Բազմիցս է նկատվել, որ նույնիսկ պարզագույն, երբեմն էլ ոչ այնքան գրագետ, սակայն առանձին պաթոսով մատուցվող հեռուստագովքն անպայման իր որոշակի դերակատարումն է ունենում: Ու թեեւ մեր առօրյա կյանքում նման երեւույթները զարմանալիորեն հաճախակի են կրկնվում, բացի դրանից էլ՝ ահավոր երկար են տեւում, բնականաբար խաղալով մարդկանց նյարդերի հետ, միեւնույն է՝ «նվիրյալ հեռուստադիտողին», ով դեռ երեկվանից ու անհամբեր սպասում է երազած ֆիլմաշարի հերթական ցուցադրմանը, վերոհիշյալը բնավ ի վիճակի չէ դուրս բերելու հավասարակշռությունից:

Ճիշտ է, այնուամենայնիվ, ավելի ստվար բանակ են կազմում նրանք, ովքեր այդ կինոկարները համարում են չափից դուրս տաղտկալի, երբեմն տարրական տրամաբանությունից զուրկ, խելքից դուրս ձգձգված եւ գլխավորը՝ լեցուն աներեւակայելի դատարկաբանություններով, լեզվական կուլտուրայի ակնհայտ ունայնությամբ ու աղքատությամբ: Ահա «բացառիկ» նմուշներից մի քանիսը՝ «Ամեն ինչ կանեմ այդ ամեն ինչից հեռու մնալու համար», «Ես քեզ սիրում եմ, ես քեզ շատ եմ սիրում, ես քեզ շատ-շատ եմ սիրում», «Նրանց հետ չեմ ուզում խոսամ», «Բժիշկն ինձ ասեց հանգիստ լինեմ, չանհանգստանամ», «Կարո՞ղ է կարողանաս այդ բանն անես», «Դու գիտես՝ ե՞ս գիտեմ»:

Բայց ես, կարծես, շեղվեցի շատերին հուզող խնդրից: Հարկ է նկատել, որ հեռուստագովազդերի մատուցման էությունը գրեթե ամենուր նույնն է: Այդպես է նույնիսկ Ճապոնիայում, թեեւ այստեղ, ինչպես վկայում է մամուլը, անպայման լայն արձագանք է ստանում շարքային քաղաքացու թեկուզ աննշան դժգոհությունը: Դրա համար էլ իսկապես քաղաքակիրթ երկիր է համարվում, տեխնիկական ամենաաներեւակայելի հեղափոխությունների մեցակենտրոն, որի արտադրած բազմատեսակ ապրանքները հեղեղել են ամբողջ աշխարհը: Իսկ մի՞թե առանձնահատուկ հարգանքի արժանի չեն ճապոնացիները թեկուզ միայն այն փաստի առնչությամբ, որ մեծագույն երկրաշարժերի հետեւանքով առաջացած ահավոր ողբերգության օրերին երկրում գեթ մեկ գողության փաստ չարձանագրվեց:

Մի քանի տարի առաջ էլ պարզվեց, որ Արեւածագի երկրի քաղաքների փողոցներում հայտնվել են ռոբոտ ոստիկաններ, որոնք բարեխղճորեն կատարում են կարգուկանոնին խստորեն հետեւելու իրենց պարտականությունները. թքել ես մայթին կամ շպրտել սիգարետի ծխո՞ւկը՝ բարի եղիր տուգանք վճարել:

Օգուտը նշմարելի է, եթե մանավանդ նկատի ունենանք, որ ռոբոտները աշխատավարձի «պահանջներ» չեն ներկայացնում:



Վերջերս էլ վաճառքի հանվեցին էլեկտրոնային փոքրիկ մտածող սարքեր, նախատեսված նրանց համար, ում համբերությունից դուրս են բերում ճապաղ ու տաղտուկ գովազդերը. հենց որ, ամենագրավիչ պահերի, կինոֆիլմի ցուցադրումն ընդհատվում է հանուն հերթական գովազդի, սարքն անմիջապես անջատում է հեռուստացույցը, սակայն երբ ֆիլմի ցուցադրումը վերսկսվում է, հեռուստացույցը վերստին սկսում է գործել նորմալ կերպով...

Շատ խելոք սարք է: Ակամա մտածում եմ՝ այ թե պահանջարկ կունենա այդ սարքը Հայաստանում:

Ճիշտ է, հարկ է խոստովանել, որ գովազդատուներն էլ այնքան միամիտ չեն, որ դյուրին կերպով զիջեն դիրքերը: Պարզ բան է, նրանք էլ են մտմտում, միջոցներ ու ձեւեր որոնում հեռուստադիտողների ուշադրությունն անպայման գրավելու համար: Այս առումով, եթե նկատի ունենանք զուտ «մերոնց», ապա «առաջնության դափնին» առայժմ արժանիորեն կրում են ամերիկահայերը. գլխավորապես թերթերի խմբագրությունների հետ համագործողները: Նրանք համարձակորեն «շեղվել են տրորված արահետներից» եւ գտել բավականին հասու, նպատակակետին խփող միջոցներ: Դե, մի՞թե ուշադրությունը գերող հնարք չէ այս հայտարարությունը, որ ժամանակին կարդացել եմ Գլենդելում լույս տեսնող թերթերից մեկում՝ «Վաճառվում է խանութ իր հաճախորդներով»: Ինչ ուզում եք ասեք՝ ստրկատեր դառնալու բավականին գայթակղիչ առաջարկ էր: Բնականաբար, դա շատերին ստիպեց կարդալ թերթը, հետաքրքրվել՝ իրո՞ք կա նման խանութ: Հաստատ կա, չէ՞ որ հասցեն էլ է նշված: Հասկանալի է, շատերի կողմից էլ սա ընկալվեց որպես անհաջող հումոր: Սակայն տվյալ դեպքում մի՞թե սա էր էականը:

Ամենահետաքրքրականն այն է, որ ուրիշ թերթերի «համարժեք» արձագանքն էլ չուշացավ: Արդյոք պակա՞ս գրավիչ էր «Կատարվում է ձրի հղիության ստուգում» հայտարարությունը: Ընթերցողները կուշտ ծիծաղելու առիթ ունեցան նաեւ կարդալով հետեւյալ գովազդերը՝ «Ամենաթանկարժեք մեքենատերերը Բրբենքում են լվանում իրենց ավտոները» կամ «Հարբած ավտոմեքենա վարելու դեպքում ձեզ սպասում է...»:

Հօգուտ հայաստանցի գովազդատուների հարկ է խոստովանել, նրանք էլ ձեռքերը ծալած չեն նստել, նրանք էլ «ստեղծագործական եռուն կյանքով» են ապրում, երբեմն հեռուստադիտողների համար առիթներ ստեղծելով լիաթոք հռհռալու, ոմանց էլ՝ տարակուսելու, լո՞ւրջ է ասվում, թե՞ պարզապես կատակ է: Ինքներդ դատեք, արդյոք տրամաբանելո՞վ են մեզ փորձում համոզել, որ «սեմուշկան», պարզվում է, «հաճելի ժամանցի լավագույն ուղեկից է»:

*Տես էջ 4*

# Երբվանից է մարդն ապրել Հրազդանի կիրճում

*1-ին էջից*

**Այդ լեզուն չիմացողը իրերի հետեւում չի կարող գտնել թաքնված բուն իմաստը: Իրերը շատ երեսներ ունեն, մեկ երեսը կարդալը դեռեւս չի նշանակում, որ ըմբռնեցինք երեւույթը խորությամբ: Այնքան շատ են Հրազդանի կիրճի հնությունները, նրանցից շատերը՝ ոչ վաղ անցյալում հայտնաբերված, որ ինչպես քարայրագետ Բենիկ Երիցյանն էր ասում՝ իմաստունի կարիք կա, որ կարդա ու հասկանա, թե ինչի մասին է այս կամ այն վկայագիրը, սովորական մարդը դժվար ըմբռնի մեզ փոխանցված ժառանգության թաքնված գիտելիքը: Անգամ գրավոր մատյաններում մեզ փոխանցված պատմությունները նորովի կկարդանք, եթե վերջապես կարողանանք ուսումնասիրել թեկուզ Հրազդանի կիրճի նյութական հսկայական մշակույթի կրող պալեոլիթյան քարայրերը, որ ընդամենը կես դար առաջ դեռ հայտնագործված չէին Հայաստանում: 1966 թվականից կիրճի տարբերական եւ համակարգված ուսումնասիրություններն ի հայս բերեցին տարբեր ժամանակների շուրջ 120 քարայր, որոնցից 6-ում հայտնաբերված են հնագույն՝ մինչեւ 100 հազար տարվա խորքերը գնացող նյութական մշակույթի իրեր: Բայց Հրազդանի քարեդարյան անցյալի մասին կպատմենք իր տեղում՝ 70 հազար տարվա հնության «Երեւան-1» քարայրի օրինակով:**

## Գետի հոսանքով՝ դեպի Երեւան

**Հրազդանի երեւանամերձ կիրճ մտնենք գետի հոսանքով՝ հեռահար դիտարկելով կամրջից կամուրջ (Հրազդանի կամրջից մինչեւ «Հաղթանակ») եւ դրանից էլ մի քիչ ավելի տարածք: Ճանապարհ ընկնենք Զովունի գյուղից. առաջինը, որ կտեսնենք Հրազդանի աջ ափին՝ ավերված Կարմիր բերդ ամրոցի միջին բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջանների դամբարանադաշտերն են՝ մի քանի հարյուր դամբարանով: 1960-ական թվականներին այստեղ հայտնաբերվեցին մ.թ.ա. երկրորդ հազարամյակի խեցեղեն, բրոնզե եւ երկաթե զենքեր, պերճանքի առարկաներ (12 բրոնզե գոտի): Ցավալի է, բայց գտնվածը Մոսկվայում եւ Պետերբուրգում է: Միջնադարյան ջրանցքն անցնելուց հետո արդեն ֆիզիկայի ինստիտուտի մոտ կտեսնենք մ.թ.ա. I հազարամյակում հիմնված Զորաբերդի ավերակները, ուշ շրջանի բազմաթիվ քարանձավներ: Հրազդանի կիրճի վրա իշխող Ծիծեռնակաբերդը գոյություն է ունեցել անհիշելի ժամանակներից. այստեղ եղել է ուշ բրոնզեդարյան կիկլոպյան ամրոց՝ իր ընդարձակ դամբարանադաշտերով (այժմ՝ հիմնականում ավերված):**

**Ծիծեռնակաբերդի մասին հնագույն ժողովրդական ավանդություն կա. այստեղ եղած բերդը սիրո աստվածուհի Աստղիկի անունով կոչվել է Աստղկաբերդ: Նույն տեղում է եղել նաեւ հայոց այդ աստվածուհու տաճարը, որի երկրորդ հարկում ապրող ծիծեռնակները, որպես սուրհանդակներ, լուրեր էին տանում Աստղիկի սիրեցյալ Վահագն աստծուն: Իսկ բյուզանդացի պատմագիր Կեդրենոսի վկայությամբ՝ բյուզանդական զորքը 1047 թ. պաշարում է Խելիդոնիոն կոչված բերդը, որը զառիթափ լեռան վրա էր կառուցված, եւ կգրավեր անմատչելի հարձակմանը չսպասող-պարեն չմթերած բերդեցիներին, եթե անսպասելիորեն արեւմուտքում չբռնկվեր Լեւոն Թոռնիկի ապստամբությունը: Մասնագետները Խելիդոնիոնը նույնացնում են Ծիծեռնակաբերդի հետ (խելիդոն-ծիծեռնակ): 1925 թվականին, երբ այդ հատվածում Հրազդանի վրա կառուցվում էր Երեւանի հիդրոէլեկտրակայանը, գետի ձախ ափին հայտնաբերվեցին բրոնզեդարյան դամբարաններ, որոնցում գտնվել են նախշավոր խեցեղեն, բրոնզե ջարդված թուր, մարդկանց եւ կենդանիների ոսկորներ: Իսկ մոտերքում գտնվում էր անմշակ քարերից կառուցված եւ մանր քարերով լցված պարսպով կիկլոպյան ամրոց: Մեծ եղեռնի հուշարձանի կառուցման ժամանակ բացված դամբարաններց մեկում հայտնաբերվել են (1967 թ.) լավ պահպանված գունազարդ կճուճներ, իսկ հուշարձանատեղիից արեւելք՝ անտառի մեջ եւս պահպանվել են հնագույն շինվածքների հետքեր: Ծիծեռնակաբերդը, փաստորեն, ոչ լավ պեղված է եւ ոչ էլ՝ լավ ուսումնասիրված, եւ բազմաթիվ գաղտնիքներ ունի իր մեջ:**

*ԲԱՑ ՆԱՄԱԿ*

# Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների համակարգման հանձնաժողովի անդամներին

Հարգելի հանձնաժողովի անդամներ, հանձնաժողովի ստեղծման գաղափարը անշուշտ ողջունելի է, կարծում եմ, նրա գործունեությունը կնպաստի Հայոց ցեղասպանության միջազգային լայն ճանաչման գործընթացին, եթե, իհարկե, լիարժեք ազգային մոտեցում ցուցաբերեք եւ ոչ թե անտարբերության մատնեք:

Վերջերս Երեւանում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությանը նվիրված հերթական գիտաժողովը, որտեղ, ցավոք, հիմնականում միայն խոսում էին Ցեղասպանության փոխհատուցման մասին եւ ոչ թե առաջարկություններ էին անում Ցեղասպանության միջազգային լայն ճանաչման մասին: Ճիշտ է, փոխհատուցումից խոսելն էլ է անհրաժեշտություն, սակայն չեմ կարծում, որ առանց Ցեղասպանության միջազգային լայն ճանաչման միջազգային դատարանները կլուծեն այդ հարցը:

Համոզված եմ, որ հիշում եք, թե ինչպես անկախության ձեռքբերման այն խառնաշփոթ օրերին մեր պետական այրերը, առանց ժողովրդի ձայնը լսելու, անսպասելիորեն, զինանշանից դեն նետեցին Հայոց լեռնաշխարհի արքա Արարատի բնապատկերը, որը 70 տարի ի վեր մեզ հիշեցնում էր անմեղ զոհերին, որոնք իրենց հայրենիքի աշխարհագրական դիրքի զավթման պատճառով նահատակվեցին, նույնիսկ գերեզման էլ չունեցան հայրենի հողում, իսկ Թուրքիային տանջում, ճնշում էր իրենց կատարած բարբարոսության համար:

Նույնիսկ այդ խայտառակ սխալից հետո, առանց խղճի խայթի, մայր օրենքում սուտ ու սխալ նշեցին, որ «Հայաստանի զինանշանի կենտրոնում, վահանի վրա պատկերված է Արարատ լեռը», ինչը, ինչպես համոզվում եք, տեսողական խաբկանք է եւ ոչ թե իրականություն, քանի որ ոչ մի իրեն հարգող հայորդի, ինչպեսեւ Սահմանադրության հեղինակները եւ Դուք, այնտեղ չեն կարող տեսնել այն, ինչը իրականում չկա: Ստացվում է, որ մենք ստիպված անամոթաբար ինքներս մեզ ենք խաբում եւ հայրենասեր ձեւանում: Գուցե այսօր, Ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին, Դուք դառը ճշմարտությունը տարբերեք այն քաղցր ստից, որի մասին նշված է Սահմանադրությունում եւ, առանց սուբյեկտիվ պատճառաբանություններ որոնելու, հանգամանորեն քննարկեք, հանրաքվե անցկացնեք, լսեք ժողովրդի ձայնը եւ համարձակորեն ուղղեք այդ խայտառակ սխալը:

Ալեհեր Մասիսը Ցեղասպանության լուռումունջ վկան է, մեր ժողովրդի ոգեղեն կապը Արեւմտյան Հայաստանի հետ, եւ նա, ինչպես հնում, իր արքայական տեսքով պետք է արտացոլված լինի զինանշանում:

Վերջապես եթե այսօր կոտորածի կազմակերպիչ Ահմեդ Ջեմալ փաշայի թոռը՝ Հասան Ջեմալն է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ծաղիկներ դնում ի հիշատակ Ցեղասպանության անմեղ զոհերի եւ իր նախնիների անունից զղջում, ապա պարզ է, որ թուրքերը մտավախություն ունեն, որ վաղ թե ուշ ոչ միայն միջազգային հանրությունը, այլեւ թուրք հասարակությունը կդատապարտի իրենց բարբարոսությունը, քանի որ Եղեռնի զոհերի հուշահամալիրը նրանք ընդունում են որպես Օսմանյան կայսրության պատմության ամոթանքի հուշարձան:

Հարգելի հանձնաժողովի անդամներ, եթե դուք իրոք մտադրված եք բարձրացնել Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը եւ պատշաճ կերպով անցկացնել 100-ամյա տարելիցը, ապա լիարժեք ազգային մոտեցում ցուցաբերեք եւ տարելիցի նախաշեմին ուղղեք մեր թույլ տված այդ խայտառակ սխալը. հանուն նահատակների Արարատի բնապատկերը վերադարձրեք զինանշան, ինչպես նաեւ աջակցեք, որպեսզի մեր վաղեմի բարեկամ Ֆրանց Վերֆելի արձանը տեղադրվի Ծիծեռնակաբերդի ստորոտում: Նա արժանի է այդ հարգանքին:

**ԷՖՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
**Իրավաբան**
**fanfano@rambler.ru**

# «Հայաստանը միակ երկիրն է, որը պաշտոնապես նշում է Ոսկերչի օրը»

## *«Ռուսաստանի ոսկերիչների գիլդիայի» եւ Հայ ոսկերիչների համաշխարհային ընկերակցության (AJA) նախագահ Գագիկ Գեւորգյանի հետ*

**- Ինչպե՞ս եւ ե՞րբ ծագեց Հայ ոսկերիչների համաշխարհային ընկերակցություն ստեղծելու գաղափարը:**

- Հայ ոսկերիչների համաշխարհային ընկերակցության պաշտոնական «ծնունդը» տեղի ունեցավ Երեւանում 1997 թ. հոկտեմբերի 19-20-ը (անցյալ տարի մենք նշեցինք կազմակերպության 15-ամյակը), Հայ ոսկերիչների առաջին համագումարում:

Նման ընկերակցության բուն գաղափարը ծագել էր նաեւ ավելի վաղ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում, ինչը զարմանալի չէ՝ նկատի ունենալով հայերի ավանդական ներգրավվածությունը համաշխարհային ոսկերչական արվեստում եւ ոսկերչության զարգացումը Հայաստանում:

AJA-ի ստեղծումը հնարավոր դարձավ Հայաստանի Հանրապետության իշխանությունների եւ Հայաստանի ու Սփյուռքի հայրենասեր հայ ոսկերիչների երկկողմ նախաձեռնության եւ փոխադարձ շահագրգռության դրսեւորման շնորհիվ:

Հայ ոսկերիչների երկրորդ խոշոր հանդիպումը տեղի ունեցավ մեկ տարի անց՝ 1998-ի հոկտեմբերին Երեւանում: Երկրորդ համագումարի աշխատանքին մասնակցեցին մոտ 200 ոսկերիչներ Բելգիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Հունաստանից, Իսրայելից, Ավստրիայից եւ այլ երկրներից, ինչպես նաեւ, անշուշտ, բուն Հայաստանի մեր գործընկերները:

Այդ ժամանակվանից մեր ընկերակցությունը ընդլայնվել է, եւ հիմա AJA-ն ունի հազարավոր անդամներ եւ երկու տասնյակ տարածաշրջանային ներկայացուցչություն աշխարհի տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ի արեւմտյան եւ արեւելյան ափերին, Եվրոպայում, Մերձավոր Արեւելքում եւ Հայաստանում:

AJA-ն համահայկական մասնագիտացված կազմակերպությունների մեջ առաջիններից մեկն է: Մեր ընկերակցության հիմնական առաքելությունն է Հայաստանի շուրջը համախմբել բոլոր հայ ոսկերիչներին ու ժամագործներին, ինչպես նաեւ միավորել տարբեր երկրներում տվյալ ոլորտում աշխատող ձեռնարկատերերին: Նման համագործակցությունը նպաստում է բիզնեսում ավելի մեծ հաջողության ապահովմանը:

Մեր ներուժը մեկտեղելով եւ փորձը միավորելով՝ մենք ի վիճակի ենք համատեղ նախաձեռնել նոր ծրագրեր, ապահովել նոր ներդրումներ եւ զարգացման նոր հեռանկարներ բացել մեր պատմական հայրենիքում: Դրա համար առկա են ավելի քան բարենպաստ պայմաններ, քանի որ մենք զգում ենք Հայաստանի կառավարության օժանդակությունը:

**- AJA-ի նախագծերը ինչպիսի՞ օգուտ կարող են տալ Հայաստանում ոսկերչության ճյուղի զարգացման առումով:**

- Հայաստանում AJA-ի կողմից իրականացվող նախագծերը տարեցտարի դառնում են ավելի լուրջ ու մասշտաբային եւ երկարաժամկետ հեռանկարում ազդում են Հայաստանի ոչ միայն ոսկերչության, այլեւ ամբողջ տնտեսության զարգացման վրա:

Այս կապակցությամբ կուզենայի ուշադրություն հրավիրել AJA-ի ներկայիս վիթխարի նախագծի՝ Հայաստանում ոսկերչական Ազատ տնտեսական գոտու ստեղծման վրա: Հայաստանի ղեկավարության եւ առաջին հերթին նախագահ Սերժ Սարգսյանի ամենաբարձր աջակցությունը ստացած այս նախագծի իրականացումը թույլ կտա երկրի ոսկերչության ճյուղը եւ ադամանդագործության ոլորտը դարձնել արտերկրից եկամուտների ստացման հզոր աղբյուր, ստեղծել նոր աշխատատեղեր եւ էական ճեղքում ապահովել տեխնոլոգիական առաջխաղացման հաշվին, Հայաստանը դարձնելով միջազգային ասպարեզում գլխավոր ճյուղային գործոններից մեկը:



**- Աշխարհում որքանո՞վ է ճանաչված հայկական ոսկերչական արվեստը:**

- Հայ ոսկերիչներին շատ լավ ճանաչում են բովանդակ աշխարհում, եւ նրանց բաժին է ընկնում համաշխարհային ոսկերչական արտադրանքի մոտ 6-8 %-ը:

Ի դեպ, Հայաստանը աշխարհի միակ երկիրն է, որտեղ պաշտոնապես նշվում է Ոսկերչի օրը. դա հոկտեմբերի վերջին կիրակին է, այս տարի՝ հոկտեմբերի 27-ը:

Բայց մենք չենք կարող ժամանակակից հայկական ոսկերչական արվեստի մասին խոսել՝ չնայելով մեր ժողովրդի անցյալին եւ չուսումնասիրելով մեր հարուստ ավանդույթները:

Այդ նպատակով ստեղծվեց AJA Foundation-ը, որի փորձագետները անցկացնում են հայկական ոսկերչական արվեստի հարուստ պատմության հետազոտություններ, պատմություն, որը մինչեւ օրս քիչ է ուսումնասիրված եւ չի վավերագրված, լայն հանրության համար բացահայտում են մեր նախնիների կյանքի հետ կապված հետաքրքրական փաստեր, որոնք վկայում են, որ դարեր շարունակ հայ ոսկերիչները ճյուղում առաջատար դիրքեր են զբաղեցրել:

Օրինակ՝ ամենաշքեղ եվրոպական գահը՝ Ռուսաստանի կայսերական գահը, որը ներկայումս պահվում է Կրեմլի Զինապալատում եւ զարդարված է ավելի քան 11 կգ քաշով ոսկե թիթեղներով, ընդելուզված 876 ադամանդով եւ 123 սուտակով, ռուսական ցար Ալեքսեյ Միխայլովիչին էին նվիրել Նոր Ջուղայի հայ վաճառականները:

Այն ոսկերչական իրերի մեծ մասը, որոնք օսմանյան սուլթանները նվիրում էին եվրոպական եւ մյուս արքունիքների անդամներին, դիվանագետներին եւ այլ ազդեցիկ անձանց, ստեղծված էին հայ վարպետների ձեռքերով:

Մեր առավելություններից մեկն այն է, որ մեր ոսկերիչների վարպետությունը հիմնված է Հայաստանում ոսկերչության բազմադարյա ավանդույթի վրա եւ մեզ անխզելիորեն կապում է հարազատ երկրի մշակույթի հետ, որտեղ էլ մենք գտնվելիս լինենք: Հայ ոսկերիչների հմտության մասին առասպելներ են պատմում: Մենք կերտում ենք ոչ թե սոսկ զարդեր, այլ դրանցից յուրաքանչյուրին վերաբերվում ենք որպես արվեստի գործի, եւ ես ուզում եմ, որ բովանդակ աշխարհում նույնպես նման վերաբերմունք լինի դրանց նկատմամբ:

**- Հնուց կարծում էին, որ ոսկերչական գործը սերնդիցսերունդ փոխանցվող ընտանեկան արհեստ է...**

- Ակնհայտ է, որ հին ժամանակներից մարդիկ սերնդիցսերունդ փոխանցել են կենսափորձը եւ հմտությունները:

Մեր ժողովրդի մեջ սերունդների կապը միշտ շատ ամուր է եղել: Դա վերաբերում է նաեւ ոսկերիչ վարպետների փորձին, որը փոխանցվում է սերնդիցսերունդ եւ թույլ է տալիս պահպանել ողջ աշխարհում ճանաչելի դարձած հայկական զարդերի առանձնահատուկ անհատական ոճը:

Հայկական ոսկերչական արտադրանքները թանկարժեք մետաղներից ու քարերից պատրաստված սովորական գեղեցիկ իրեր չեն. դրանք ասես շնչավոր լինեն եւ ներառում են մեր ժողովրդի բազմադարյա մշակույթը եւ նրա ծագումնաբանական կոդը, որն արտացոլում է հայերի գեղագիտական նախասիրությունները:

Պատմականորեն այնպես է պատահել, որ հայերը ոսկերչական արվեստով զբաղվել են հնագույն ժամանակներից: Էրեբունիի, Մեծամորի հնագիտական պեղումների ժամանակ գտել են բազմաթիվ ոսկերչական իրեր՝ զարդեր, ոսկե եւ արծաթե ծիսական կահ-կարասի, որոնք հիացնում են իրենց գեղեցկությամբ ու կատարելությամբ:

Հայուհիները ավանդաբար կրել են արծաթե եւ ոսկեջրած սքանչելի գոտիներ, ճարմանդներ, կոճակներ, գլխազարդեր, մանյակներ, մատանիներ: Ուստի կարելի է համարձակորեն ասել, որ ոսկերչի մասնագիտությունը հայերի մեջ առավել հարգված եւ պահանջված զբաղմունքներից մեկն է եղել: Մենք չենք կարող կորցնել այն, ինչը մեզ համար պահպանել են մեր պապերն ու նախապապերը, ձեռքիցձեռք փոխանցելով արհեստը:

**- Ի՞նչ եք կարծում, հայ երիտասարդները հետաքրքրվո՞ւմ են ոսկերչական գործով:**

- Այո, անկասկած: Սակայն լոկ հետաքրքրությունը բավական չէ. երիտասարդ տաղանդավոր մարդիկ պետք է ստանան համակարգային աջակցություն: Լոկ այդ դեպքում օգուտ կստացվի ոչ միայն կոնկրետ մարդու համար, այլեւ, երկարաժամկետ առումով՝ Հայաստանի ոսկերչության ճյուղի եւ տնտեսության համար:

Ավանդույթները պահպանելու եւ փոխանցելու, ինչպես նաեւ երիտասարդներին ոսկերչական վարպետություն սովորեցնելու նպատակով AJA-ն Հայաստանում, Ռուսաստանում եւ Արցախում հիմնել է մի քանի ուսումնական կենտրոն, որոնցում սովորում են 20-ական երիտասարդ մասնագետներ: Մենք որոշ երիտասարդ վարպետների աշխատանքները ներկայացրել ենք նաեւ «YerevanShow»-ին: Իրենց հանդեպ նման ուշադրությունը տաղանդավոր վարպետներին հնարավորություն է տալիս մասնագիտորեն առաջադիմել եւ խթանում է նրանց հետագա ստեղծագործական աճը: Մեր ուսումնական կենտրոնների աշխատանքը ցույց է տալիս, որ եթե ստեղծվեն պայմաններ, ապա մեր երիտասարդ հայ ոսկերիչները անպայման կզարմացնեն աշխարհին: Ես դրանում անկեղծորեն համոզված եմ:

**- Դուք գիտեք, որ եվրոպական շատ երկրներ լրջորեն տուժել են տնտեսական ճգնաժամից: Այն որքանո՞վ կանդրադառնա ոսկերչության ճյուղի վրա:**

- Իհարկե, վերջին տասնամյակում զանազան պատճառներով համաշխարհային արդյունաբերության շատ ու շատ ճյուղեր բախվեցին տնտեսական դժվարությունների, եւ ոսկերչության ճյուղը, ցավոք, բացառություն չկազմեց: Տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը իրենց վրա զգացին աշխարհի տարբեր երկրներում աշխատող մեր ոսկերիչներից շատերը:

Սակայն, չնայած դրան, ես հավատում եմ, որ մենք (նախ եւ առաջ այն պատճառով, որ հայ ենք) կհաղթահարենք բոլոր խոչընդոտները, եւ հայ ոսկերիչներին միավորող AJA-ն կնպաստի ճյուղի հետագա զարգացմանը:

**- Հենց վերջերս Դուք ընտրվեցիք «Ռուսաստանի ոսկերիչների գիլդիայի» ղեկավար: Ձեզ ինչպե՞ս է հաջողվում բիզնեսը համատեղել հասարակական մի քանի պաշտոնների հետ:**

- Ոսկերիչների գիլդիայի խորհրդի նախագահ ընտրվելը ինձ համար մեծ պատիվ է եւ պատասխանատվություն: Դա ռուսաստանցի գործընկերներիս մեծ վստահության եւ ճանաչման վկայությունն է:

Ռուսաստանը ոսկու եւ ադամանդների պաշարներով աշխարհի ամենահարուստ երկիրն է, իսկ ոսկերիչների գիլդիան միավորում է Ռուսաստանի ոսկերչության ճյուղի բոլոր խոշորագույն եւ հեղինակավոր կազմակերպություններին:

Որպես ղեկավար ես բազմաթիվ հետաքրքրական նախագծեր ունեմ գիլդիայի շրջանակներում եւ վստահ եմ, որ AJA-ի եւ «Ռուսաստանի ոսկերիչների գիլդիայի» սերտ փոխգործողությունը փոխշահավետ կլինի եւ վերջին հաշվով կնպաստի Հայաստանում ոսկերչության ճյուղի զորացմանը:

# Թանկ ենք վճարում

*3-րդ էջից*

Այո, դուք իսկի էլ անհարմար չպետք է զգաք, եթե այսուհետեւ արեւածաղկի սերմն առանց այլեւայլության սկսեք «չրթել» ոչ միայն, ասենք, մարզադաշտում կամ պուրակում նստած, այլեւ, ինչու չէ, դիցուք՝ համերգասրահում: Փորձեք, գուցե, իսկապես, մեծ բավականություն կստանաք:

Իսկ ահա մանկան ձայնով ոստիկանի բարբաջանքը ոչ մի կերպ հնարավոր չի լինում հասկանալ: Դե որ հիրավի բարբաջանք է, ուրիշ ոչինչ, իմաստը գոնե մոտավորապես ընկալել հնարավոր չէ: Սրա հեղինակը հաստատ այլմոլորակային է:

Առանձին «հեռուստաձեռքբերում» կարելի է վստահորեն համարել «Ձգտիր հասնել ավելին» արտահայտություն-խորհուրդը: Պարզ բացատրությունը երեւի թե սա է՝ ինչ-որ տեղ մի ավել կա, եւ հարկ է կարողանալ գտնել-ձեռք գցել այն: Շատ կուզեի գտնել այդ ավելը, գտնել ու մաքրել-տեքի բերել շուրջբոլորը, այդ թվում եւ հեռուստաեթերը...

Տեղին է ասել, որ այս խառնաշփոթին զուգահեռ, մի տեսակ որպես սեւ հումոր, զավեշտ է հնչում ինքնագովազդը, որ երբեմն մատուցվում է շեշտված խանդավառությամբ՝ մեր ստուդիան համարվում է ամենա-ամենան, մեր վարկանիշը այսքան ու այդքան է, մինչդեռ մյուսներինը... Սա ակամա հիշեցնում է առանձին մարզաձեւերից Հայաստանի առաջնությունը, որի գլխավոր խնդիրը (թքած, որ հանդիսական չկա) մեկն է՝ թույլիկների շրջանում ի հայս բերել ուժեղիկին, խեղճուկրակ չեմպիոնին... Բայց մրցումները գոնե ընդմիջում ու ավարտ են ունենում, մինչդեռ եթերում թեւածում է, ազատ ու աներեր է շարունակում թեւածել գորշության ամենաթողությունը: Դրա ամենաթարմ օրինակը գարեջրի շիշը տարբեր առարկաներով ու մարմնի մասերով բացելու «արդի» ձեւերի ցուցադրումն է: Սա, հարկ է խոստովանել, ուրույն տեսակի գովազդային «փիլիսոփայություն» է:

Ինչպես ասում են՝ վերջը բարի լինի: Իսկ թե երբ է գալու սթափվելու ժամը՝ Աստծուն է հայտնի: Եվ արդյոք այդ տարօրինակ ու տխուր իրավիճակը չի՞ գալիս հաստատելու այս անեկդոտանման հարցուպատասխանը. «Ի՞նչն է հային տարբերում հրեայից»: «Հրեան բժշկի օգնության է դիմում հիվանդանալուց մեկ օր առաջ, իսկ հայը՝ մեռնելուց մեկ օր առաջ...»:

Կյանքը ցույց է տալիս, որ անտարբերության դրսեւորումների եւ ուշացումներով սթափվելու համար միշտ էլ հարկ է լինում թանկ վճարել:

ՄԻՍԱՔ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱԶԳ

## Միջազգային

# «Քո անկման համար ես մեղավոր չեմ»

## Էյնուլլա Ֆաթուլլաեւին

Հին, բարի-ժամանակներում այլախոհները բանտից դուրս էին գալիս իրենց սկզբունքներում ավելի մեծ համոզվածությամբ: Ֆաթուլլաեւը 4,5 տարի անազատության մեջ, ընդհակառակը, «խորապես զղջացել» եւ դարձել է իշխող վարչախմբի երդվյալ ջատագովն ու նրա շահերի սպասարկուն: Այնքան, որ մինչ Իլհամ Ալիեւի մամլո խոսնակը հայտարարել է, որ «օրենքը նախագահի ընտանիքին չի արգելում զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ» (տես՝ www.president.az), Էյնուլլան, ընդհակառակը, խոստացել է «անցկացնել լրագրողական անկախ հետաքննություն եւ ապացուցել, որ Իլհամ Ալիեւը օֆշորային գոտում անշարժ գույք եւ դրամական միջոցներ չունի» (տես՝ www.haqqin.az):

Նույն տեղում Ֆաթուլլաեւը հեղինակել է «Ինչո՞ւ է Իբրահիմբեկովն Ալիեւին ավելի շատ ատում, քան Սարգսյանին» վերտառությամբ հոդված: Նյութը կինոռեժիսոր եւ դրամատուրգ Ռուստամ Իբրահիմբեկովի «Ռոսբալտ»-ին տված հարցազրույցն է, որից Էյնուլլան առանձնացրել է մի քանի սկզբունքային պահ:

Իբրահիմբեկովն ասել է, որ «հայ ժողովուրդը մեզ (ադրբեջանցիներին) թշնամի չէ»: Ուրիշ ի՞նչ պիտի ասեր մտավորական-ստեղծագործող մարդը: Ֆաթուլլաեւը, սակայն, միանշանակ հայտարարում է. «Ադրբեջանական ժողովրդի բացարձակ մեծամասնությունը ձեզ հետ համաձայն չէ, ընկեր Իբրահիմբեկով, քանի որ հարյուրհազարավոր ադրբեջանցիներ չեն կարողանում վերադառնալ իրենց հարազատ երկրամասերը, որտեղ դարերով ապրել են իրենց նախնիները»: Նա կարծում է, որ «հայ-ադրբեջանական դիմակայությունը հասել է մի փուլի, որտեղ արդեն փոխզիջումներ լինել չեն կարող, քանի որ դա ազգային պատվի հարց է»:

Իբրահիմբեկովն ընդգծել է, որ «երկու երկրներն էլ (Ադրբեջանը եւ Հայաստանը) մարդկանց արտաքսել են»: Ֆաթուլլաեւը հակադարձում է. «Այո, Իբրահիմբեկով, արտաքսել են նախ Հայաստանից, ապա՝ Ադրբեջանից»: Նա Հայաստանին անվանում է «օկուպանտ եւ կոնֆլիկտի նախաձեռնող»: Այստեղ Էյնուլլայի զգացմունքներն իշխել են գիտակցությանը, քանի որ «օկուպանտը» չի կարող լինել «կոնֆլիկտի նախաձեռնող» այն պարզ պատճառով, որ «օկուպացիան» արդեն իսկ վերջ է դնում կոնֆլիկտին:

Իսկ թե ի՞նչ հիմքի վրա է նա պնդում, որ «արտաքսել են նախ Հայաստանից», մնում է ենթադրել. այսպես պնդում է իլհամալիեւյան քարոզչամեքենան: Փաստն այն է, սակայն, որ 1988թ.-ի փետրվարի 26-28-ին եղել է Սումգայիթ: Իսկ «Կապանից հարյուրավոր փախստականների» թեման ընդմիշտ փակել է Ադր. ԿԿ Բաքվի քաղկոմի 1-ին քարտուղար Ֆուադ Մուսաեւը՝ վկայելով, թե իրականում ովքեր եւ ինչ նպատակով էին 88-ի փետրվարյան օրերին, նախքան Ստեփանակերտում ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանը կիրառվեր եւ կընդուներ հայտնի որոշումը, «ավտոբուսներ տրամադրում, մարդկանց տանում Բաքվի ուսանողական եւ բանվորական հանրակացարանները...» (տես՝ http://www.azeribooks.narod.ru/politika/zardusht–alizade/konets–vtoroy–respubliki.htm)

Անցնենք առաջ. Ռուստամ Իբրահիմբեկովի կարծիքով, «մարդկանց զորակոչում են բանակ», ինքը նրանց չի հորդորում «չկատարել իրենց պարտքը», բայց «հակամարտության ռազմական լուծումը հանցագործություն է»: Այս դեպքում Ֆաթուլլաեւին ոչինչ չի մնում, քան հարցնել. «Ինչո՞ւ դուք այդքան սառնասրտորեն չեք քննարկում Ադրբեջանի ներքին խնդիրները: Ստացվում է, որ դուք Ալիեւին ավելի շատ եք ատում, քան Սարգսյանի՞ն»: Ի՞նչ կապ ունի Իլհամ Ալիեւի հանդեպ Իբրահիմբեկովի ատելությունը «հակամարտության ռազմական լուծումը հանցագործություն է» ճշմարտության հետ: Չի՞ հետեւում, որ ով խոսում է հակամարտության խաղաղ կարգավորման մասին, Իլհամ Ալիեւի թշնամին է: Բայց այդ դեպքում ինչո՞ւ թիրախ ընտրել հենց Իբրահիմբեկովին:

Էյնուլլան թող «դատափետի» ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների առաջնորդներին, միջազգային կառույցներին, որ առաջարկում են փոխզիջումների ճանապարհով գտնել բոլոր կողմերի համար ընդունելի լուծում: Չէ՞ որ «հայ-ադրբեջանական դիմակայությունը հասել է մի փուլի, որտեղ փոխզիջումներ չեն կարող լինել, քանի որ դա ազգային պատվի հարց է»: Նշանակում է՝ միայն պատերա՞զմն է «ուղիղ ճանապարհ», այն, ինչ Իլհամ Ալիե՞ւն է ասում:

Ամեն ինչ հասկանալի է դառնում, երբ Ֆաթուլլաեւը «բզկտում է» Իբրահիմբեկովի թերեւս ամենահիմնական միտքը՝ «Լեռնային Ղարաբաղը ոչ միայն տարածք է, այլեւ գերազանցապես հայ բնակչություն»: Նա գրել է. «Այդ արտահայտությունը սիրում էր հաճախ կրկնել Վարդան Օսկանյանը... Մի՞թե ձեզ հայտնի չէ, թե ինչպես է Հայաստանն «ապահովել» (չակերտները Ֆաթուլլաեւինն են Վ. Ա.) Ղարաբաղում իր մեծամասնությունը: Դուք չգիտե՞ք, որ նրանք Շուշիում 1918-ին 30 000 (՞- Վ. Ա.) են բնաջնջել: Հանգստի ժամին կարդացեք Խոսրով-բեկ Սուլթանովին, այդ գրքույկը ձեզ շատ բան կպատմի:

Ավելին, ինչո՞ւ այդ տարածքը դուք չեք անվանում ադրբեջանական: Ի՞նչ է նշանակում՝ ոչ միայն տարածք: Ահա ես ձեզ կասեմ, որ Էլզասը ոչ միայն տարածք է, այլեւ գերազանցապես գերմանական բնակչություն: Եվ ի՞նչ, դուք առաջարկում եք Էլզասը մտցնել Գերմանիայի տարա՞ծք: Չխոսեք այդ մասին Ֆրանսիայում, թե չէ ձեզ համար կրկին վատ կլինի»:

Մի կողմ թողնենք Շուշիում 1918-ին «30 000 բնաջնջելու» մասին Ֆաթուլլաեւի մտավարժանքները. աշխարհին է հայտնի, որ 1920թ. մարտի 23-ին Խոսրով-բեկ Սուլթանովը եւ թուրք «զինվորական խորհրդատուներն» են կազմակերպել Շուշիի հայ բնակչության սպանդը: Չանդրադառնանք նաեւ Էլզասի հարցի շահարկումներին: Ռուստամ Իբրահիմբեկովը, կարող ենք վստահաբար ասել, իր երկրի, ժողովրդի նվիրյալն է: Քանի որ կարողանում է ենթատեքստով հնչեցնել հիմնականը՝ «պատրա՞ստ է Ադրբեջանի վարչախումբը քաղաքակիրթ երկխոսության գնալ Լեռնային Ղարաբաղի հայ մեծամասնության հետ»:

Վարչախմբի անունից պատասխանել է Էյնուլլա Ֆաթուլլաեւը. «Ոչ, քանի որ դա ազգային պատվի հարց է»: Իբրահիմբեկովն ասել է. «Դա հանցագործություն է»: Ֆաթուլլաեւը, այլ հիմնավորում չունենալով, Իբրահիմբեկովին մեղադրում է «իր ժողովրդին դավաճանելու» մեջ:

Մեկ անգամ արդեն ապացուցվել է, թե ո՞վ է դավաճանել ադրբեջանական ժողովրդին, ո՞վ է նրան Սումգայիթում, Գանձակում, Բաքվում մղել վայրագությունների, կանիբալիզմի, ո՞վ է հպարտացել, որ Ստեփանակերտի «բնակֆոնդի երկու երրորդն ավերված է» /տես՝ www.erevangala500. com/, ո՞վ է հղփացել, որ «1991-ը կդառնա ԼՂ հարցի լուծման վերջին տարին», եւ ո՞վ է ռազմաճակատից փախչող սպաներին ամոթանք տվել վախկոտության համար (տես՝ www.heydaraliev.org):

Իբրահիմբեկովը չի ուզում, որ իր ժողովուրդը կրկին ենթարկվի փորձության: Քանի որ նա իր հայրենիքը սիրում է: Իսկ թե ո՞ւմ եւ ի՞նչ է սիրում Ֆաթուլլաեւը, ամենայն հավանականությամբ կվկայեն բանտային բիրտ վերակացուները, եթե նա հանկարծ փորձի վերադառնալ այն գիտակցությանն ու պատասխանատվությանը, որ ունեցել է «Ղարաբաղյան օրագիր»-ը շարադրելիս (տես՝ http://sumgait.info/khojaly/eynulla-fatullayev-khojaly.htm):

- Քո անկման համար ես մեղավոր չեմ, մի կեղտոտիր անցյալը եւ ներկան... Մեղավոր չէ նաեւ Ռուստամ Իբրահիմբեկովը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Վատիկանի կլինիկայի նախկին ղեկավարը ձերբակալվեց յուրացումների համար

**Իտալիայի ոստիկանությունը 4 մլն եվրոյի յուրացման մեղադրանքով ձերբակալել է հոգեւորական Ֆրանկո Դեկամինադային: Նա ներկայումս տնային կալանքի տակ է, հաղորդում է La Repubblica թերթը:**

**Քննության տվյալների համաձայն, 2004-2011 թթ. Հռոմի «Կույս Մարիամ» մաշկաբանության ինստիտուտը գլխավորած Դեկամինադան մասնակցել է կլինիկային հատկացված միջոցների հափշտակմանը: Այդ ժամանակահատվածում հափշտակվել է 14 մլն եվրոն: Քննիչները կարծում են, որ այդ գումարից 4 միլիոնը անձամբ յուրացրել է Դեկամինադան:**

**Քննությունից պարզվել է, որ Դեկամինադան եւ իր հանցակիցները անցյալում կեղծված հաշիվներ են ներկայացրել հարկային մարմիններին: Հոգեւորականից բացի ձերբակալվել են խարդախություններին մասնակցած երկու գործարարներ: Նրանք եւս տնային կալանքի տակ են:**

**Ոստիկանության տվյալներ վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ վերջին ամիսներին կլինիկայի 1500 աշխատակիցներ (այդ թվում 300 բժիշկներ) աշխատավարձ չեն ստացել:**

**Հոգեւորականի նկատմամբ քննություն էր սկսվել այն բանից հետո, երբ բյուջեից կլինիկային հատկացված միջոցների մեջ 600 միլիոնի պակաս էր հայտնաբերվել: 2013-ի փետրվարին պապական գահից հրաժարվելուց առաջ Բենեդիկտոս 16-րդը իր ենթականերին խնդրել էր զբաղվել կլինիկայի ֆինանսական խնդիրների հարցով:**

### ԱՐՔԱՅԱԿԱՆ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# Իսպանիայի գահը սասանվում է

## Խուան Կառլոսի դուստրը եւ փեսային սպառնում է բանտարկություն

**Իսպանիայի Խուան Կառլոս թագավորի դուստր Քրիստինան՝ Պալմա դե Մայորկայի դքսուհին, որպես կասկածյալ հանդես է գալու կաշառակերության հետ կապված դատավարությունում, որին մասնակից են միապետի ընտանիքի անդամները՝ 47-ամյա գահաժառանգուհին եւ նրա ամուսինը՝ Պալմա դե Մայորկայի դուքս Ինյակի Ուրդանգարինը:**

**Այս խայտառակ պատմության մասին հաղորդում են եվրոպական մի շարք լրատվամիջոցներ, մասնավորապես՝ Ֆրանսպրես գործակալությունը եւ բրիտանական «Թելեգրաֆ» թերթը:**



**Տվյալ գործով նշանակված դատական լսումները տեղի կունենան Պալմա դե Մայորկայի քաղաքային դատարանում ապրիլի 27-ին:**

**Արքայադուստր Քրիստինան եւ իր ամուսինը կասկածվում են Noos Institute ոչ կառավարական կազմակերպությանը պատկանող հանրային միջոցներից 6 մլն եվրո վատնելու մեջ: Այդ կազմակերպության ղեկավարը Ուրդանգարինն է:**

**Մարզական եւ զբոսաշրջային միջոցառումների կազմակերպմամբ զբաղվող այդ կառույցի տնօրենների խորհրդի կազմում գահաժառանգուհին ընդգրկված է եղել 2004-2006 թթ.: Քրիստինան նաեւ համատերն է մի քանի մասնավոր ընկերությունների, որոնք նույնպես ապօրինությունների մեջ են ներքաշված Ուրդանգարինի արարքների հետեւանքով:**

**Դուքսը փորձում է կնոջը պաշտպանել մեղադրանքներից, պնդելով, թե իր մեքենայությունները հայտնի չեն եղել կնոջը, սակայն Ուրդանգարինի գործարար ընկերներից մեկի՝ Դիեգո Տորեսի ցուցմունքները վկայում են, որ Քրիստինան ոչ միայն տեղյակ է եղել անցուդարձին, այլեւ կանոնավորապես խորհուրդներ է տվել այդ հարցերի առնչությամբ:**

**Որոշ տեղեկությունների համաձայն, իշխանուհին մասնավորապես 571 հազար եվրո է վաստակել ամուսնու միջոցներով ստեղծված Alzoon ընկերության գործունեության 3 տարիների ընթացքում, մինչդեռ այդ ընկերությունում ներդրումները կազմել են ընդամենը 1503 եվրո: Քննիչների հետ համագործակցող Դիեգո Տորեսի նամակներից պարզվում է, որ Ուրդանգարինի մեքենայություններին տեղյակ է եղել նաեւ անձամբ թագավորը:**

**Իսպանացիները բուռն դժգոհություն են արտահայտում թագավորական ընտանիքի անդամների շռայլ ապրելակերպի առթիվ, մինչ երկրի տնտեսությունը քայքայվում է, գործազրկությունը հասել է 26 տոկոսի: Փետրվարին անցկացված հանրային հարցման տվյալների համաձայն, բնակչության միայն 54 տոկոսն է հավանություն տալիս իշխանությունների գործողություններին:**

**Պալմա դե Մայորկայի դուքսը 45 տարեկան է, ձեռնագնդակի օլիմպիական նախկին չեմպիոն է: Նա արքայադուստր Քրիստինայի հետ ամուսնացել է 2007-ին: Ընտանիքում կա 4 երեխա: Դուքսը արդեն երկու անգամ՝ 2012-ին եւ 2013-ին որպես կասկածյալ է հանդես եկել դռնփակ լսումների ժամանակ:**

**Դատական իշխանությունները սպառնում են առգրավել զույգի ունեցվածքը՝ Բարսելոնում 2004-ին 5,8 մլն եվրոյով գնված շքեղ առանձնատունը, ինչպես նաեւ բանտարկության դատապարտել ամուսիններին:**

# Եգիպտոսն իրանցիներին թույլ չի տալիս մտնել Կահիրե

**Եգիպտոս է այցելել իրանցի զբոսաշրջիկների առաջին խումբը: Կահիրեի իշխանությունները հույս ունեն, թե իրանցիները կկարողանան բարելավել «արաբական գարնան» իրադարձություններից հետո այդպես էլ ոտքի չկանգնած զբոսաշրջության վիճակը: Սակայն ինչպես արմատական իսլամիստները, այնպես էլ ազատականները քննադատում են կառավարության քաղաքականությունը:**

**Իսլամի ջատագովները համոզված են, որ զբոսաշրջիկների քողի տակ Եգիպտոս կգան քարոզիչներ, որոնց խնդիրն է հնարավորինս մեծ թվով սուննիների համոզել միանալու իսլամի շիա ուղղությանը: Սուննի սալաֆականները պնդում են, թե Իրանը միջոցներ կհատկացնի շիաների սրբավայրեր համարվող հուշարձանների նորոգման նպատակով:**

**Եգիպտոսի զբոսաշրջության նախարար Հիշամ Զաազուն ի պատասխան հայտարարել է, որ «շիաների սպառնալիքի» հետ կապված երկյուղները հիմնազուրկ են: «Իրանցիներն արդեն քանի տասնամյակ իրենց հանգիստն անցկացնում են Թուրքիայում, բայց թուրքերը դրանից շիա չեն դարձել», ասել է նա:**

**Սակայն իշխանությունները վախենում են, որ կրոնական հողի վրա կարող է լարվածություն ծագել: Այդ պատճառով իրանցի զբոսաշրջիկներին թույլատրված է այցելել միայն Եգիպտոսի հարավում գտնվող հին հուշարձաններ: Նրանց թույլ չեն տալիս մուտք գործել մայրաքաղաք Կահիրե, որտեղ կան շիաների պաշտամունքային սրբավայրեր: Իրանն օդային հաղորդակցությամբ կապված է Եգիպտոսի հարավի, բայց ոչ մայրաքաղաքի հետ:**

**Ազատական ընդդիմության առաջնորդ Մուհամմեդ էլ Բարադեյի կարծիքով, նման քաղաքականությունը քննադատությանը չի դիմանում: «Եթե շիաները եւ սուննիները կարող են միասին հաջ (ուխտագնացություն) կատարել, մի՞թե չեն կարող միասին աղոթել միեւնույն մզկիթներում», հեգնանքով ասում է նա:**

# Մշակույթ

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

## Կմեկնարկի Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնը

Ապրիլի 6-13 -ը կանցկացվի Վ. Փափազյանի անվան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնը, որն այս տարի նվիրվելու է վերջերս անժամանակ կյանքից հեռացած, փառատոնի համահիմնադիր, միջազգային մեծ ճանաչում ունեցող շեքսպիրագետ Անջեյ Ժուրովսկու հիշատակին:




Ի դեպ, Անջեյ Ժուրովսկու այրին կժամանի փառատոնի բացմանը, տեղեկացրեց Շեքսպիրյան փառատոնի նախագահ Հակոբ Ղազանչյանը եւ ավելացրեց, որ Ա. Ժուրովսկին մեծ ավանդ ունի փառատոնի կայացման գործում:

Փառատոնի բացումը տեղի կունենա ապրիլի 6-ին Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի «Ջոն Արքա» բեմադրությամբ եւ Պատանի հանդիսատեսի թատրոնի «Վենետիկի վաճառականը» մոնոներկայացմամբ:

Ի դեպ, Փառատոնի ընթացքում կներկայացվի Անջեյ Ժուրովսկու մշակած «Շեյլոկ» սցենարի հիման վրա Վարշավայի թատերական ակադեմիայում ստեղծված համանուն լեհական ներկայացումը, որի գլխավոր դերակատարն է հանրահայտ դերասան Պյոտր Կոնդրասին:

Փառատոնին Շեքսպիրի մի քանի ստեղծագործությունների հիման վրա իր ստեղծած ներկայացմամբ հանդես կգա աշխարհի հեղինակավոր՝ Ռումինիայի Կրայովայի Շեքսպիրյան փառատոնի տնօրեն, միջազգային մեծ հեղինակություն վայելող թատերական գործիչ Էմիլ Բորոգինան:

Կներկայացվեն նաեւ Ուլյանովսկի Գոնչարովի անվ. դրամատիկական թատրոնի «12-րդ գիշեր» կատակերգությունը՝ Ռուսաստանի ժող. արտիստ, պետ. մրցանակի դափնեկիր Կոպիլովի բեմադրությամբ եւ Փարիզի Ավանսի գեղարվեստամշակութային կենտրոնի «Օթելլո» իտալա-ֆրանսիական ներկայացումը: Լեհաստանից հանդես կգա նաեւ Նատալյա Վիլկը՝ Շեքսպիրի պիեսների ներկայացումով:

Փառատոնը դարձել է մեր մշակութային ամենասպասված իրադարձություններից մեկը, քանի ուր յուրաքանչյուր տարի տարբեր թատերախմբեր են ժամանում Հայաստան զանազան երկրներից եւ հայ հանդիսականին ներկայացնում իրենց մշակույթը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Ինչո՞ւ է չեղյալ հայտարարվել «Դորիանս» եւ «Ռեինկարնացիա» խմբերի համերգը




Մոսկվայում՝ Կրեմլի պետական պալատում կայանալիք «Դորիանս» եւ «Ռեինկարնացիա» խմբերի համերգը չի կայանա:

Երեկ «Դորիանս» խմբի վարչությունը հանդես է եկել հայտարարությամբ, որում ասվում է. «Ապրիլի 11-ին հայտարարված «Դորիանսի» համերգը Մոսկվայում չի կայանա կազմակերպչի մեղքով, որը չի ապահովել անհրաժեշտ պայմանները խմբի ելույթի համար: Համերգից մեկ շաբաթ առաջ կազմակերպիչը հայտնել է այն չեղյալ հայտարարելու մասին, ինչը ոչ պրոֆեսիոնալ վերաբերմունքի ակնհայտ դրսեւորում է: «Դորիանսն» իր անունից ներողություն է խնդրում Մոսկվայի իր երկրպագուներից, որոնք ակնկալում էին հանդիպել սիրելի խմբին»:

«**Ազգը**» ցանկացավ հավելյալ տեղեկատվություն ստանալ, թե մոսկովյան համերգի կազմակերպիչները ո՞ր անհրաժեշտ պայմանները չեն ապահովել խմբի ելույթի համար: Մեր հարցին ի պատասխան «Դորիանս» խմբի պրոդյուսեր Արա Թադեւոսյանը հրաժարվեց հավելյալ մեկնաբանություն տալ, ասելով. «Ինչ ցանկանում էինք ասել, հաղորդագրության միջոցով ասել ենք, հավելյալ ոչինչ չենք ցանկանում ավելացնել»:

Այդպես էլ հասկանալի չէր, թե մասնավորապես ի՞նչ պայմանների մասին է խոսքը, որ համերգի կազմակերպիչները չեն ապահովել:

Սակայն «Ազգն» իր մոսկովյան աղբյուրներից ճշտեց, որ համերգի տոմսերի նույնիսկ կեսը չի վաճառվել եւ հավանաբար դա էլ համերգի չեղյալ հայտարարելու պատճառն է դարձել:

Ս. Հ.

## Նրա ստեղծագործության արդյունքը օպտիմիզմն է, հավատալու ուժը...

«Նրա ստեղծագործությունների արդյունքը օպտիմիզմն է, հավատալու ուժը...»:

Ռոբերտ Ամիրխանյանի այս բնորոշմամբ՝ ուղղված **Մարտուն Իսրայելյանի** ստեղծագործություններին, սկսվեց ապրիլի 3-ի համերգը՝ նվիրված կոմպոզիտորի 75-ամյա հոբելյանին, որը կայացավ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության ներկայացմամբ, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Մարտուն Իսրայելյանը ծնվել է 1938թ Գյումրիում: 1964թ ավարտել է տեղի երաժշտական ուսումնարանի տեսության եւ կոմպոզիցիայի բաժինը Ա. Շիշյանի ղեկավարությամբ: 1969թ ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը Գրիգոր Եղիազարյանի ղեկավարությամբ: Նույն թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է: 1969-1981թթ աշխատել է Երեւանի Ա.Բաբաջանյանի անվան երաժշտական ուսումնարանում (տեսություն, կոմպոզիցիա), 1985-ից մինչեւ օրս աշխատում է Երեւանի Կոմիտասի անբան պետական կոնսերվատորիայում: 1991 թվականից ղեկավարում է Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության ստեղծագործական մասնաճյուղը: Արժանացել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության եւ Հայաստանի կոմպոզիտորների միության մրցանակին (2008թ.), Հայաստանի մշակույթի նախարարության ոսկե մեդալին (2009թ.): Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ է (2010թ.): Ստեղծագործում է սիմֆոնիկ, կամերային եւ վոկալ ժանրերում:

Համերգի ընթացքում հնչեցին կոմպոզիտորի կամերային, անսամբլային ստեղծագործություններից. «Հիմներ» դաշնամուրի համար (1995թ), սոնատ ջութակի եւ դաշնամուրի համար (2002թ.), «Ադաջիո եւ ալեգրո» ջութակի, թավջութակի եւ դաշնամուրի համար (2010թ), սոնատ թավջութակի եւ դաշնամուրի համար թիվ 3 (1994թ) եւ լարային կվարտետ (1991թ.): Իրենց ինքնատիպ մեկնաբանություններով հանդես եկան կատարողներ՝ Նաիրա Իսրայելյանը (դաշնամուր), Գառնիկ Ենգիբարյանը (թավջութակ) եւ «Վարդանյան» լարային քառյակը (Աստղիկ Վարդանյան-I ջութակ, Աշոտ Դումանյան-II ջութակ, Մերի Դոլմազյան-ալտ, Արտյոմ Նաղդյան-թավջութակ):

Մարտուն Իսրայելյանի ստեղծագործություններն աչքի ընկան մի կողմից ներքին լարվածությամբ, մտածկոտությամբ, մյուս կողմից՝ լուսավոր ու լավատեսական ընթացքով, որով եւ գրավեցին ունկնդրի համակ ուշադրությունը:

Կոմպոզիտորը շարունակում է ստեղծագործել եւ իր մասնագիտական հմտություններն ու գիտելիքները փոխանցել երիտասարդ սերնդին, ինչպես նաեւ իրեն բնորոշ լուսավոր ու պայծառ կերպարով վայելել բոլորի սերն ու հարգանքը:

ԱԹՈՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՀՀԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ

## Պոեզիա, որ ջնջում է ժամանակների սահմանները

*Օրերս «Ապոլոն» հրատարակչությունը լույս ընծայեց սերբ անվանի բանաստեղծուհի Լյուբիցա Միլետիչի «Արարատի հողմերը» երկլեզու ժողովածուն*

**Լյուբիցա Միլետիչը սերբական ժամանակակից պոեզիայի նշանավոր դեմքերից է, լայնորեն ճանաչված ոչ միայն իր հայրենիքում, այլեւ նրա սահմաններից դուրս: Շուրջ տասը գրքերի հեղինակ է: Բանաստեղծությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով, առանձին գործեր նաեւ հայերեն, որոնք տեղ են գտել 20-րդ դարի սերբական պոեզիայի «Կոսովյան արեւ» անթոլոգիայում («Ապոլոն» հրատարակչություն, 2003):**




**Նրա բանաստեղծական ներկապնակը հարուստ է հայրենի եզերքի պատկերներով: Իր ժողովրդի արյունոտ անցյալը կրող բանաստեղծուհին միաժամանակ մտահոգ է նրա ներկայով ու ապագայով: Նրան հանգիստ չի տալիս հայրենի Կոսովոյի արնածոր ու չսպիացող վերքը եւ գուցե դա է պատճառը, որ նա բանաստեղծական խոսքով բարձրաձայնում է ճշմարտությունը: Նրա խոսքը դիպուկ է, սթափեցնող եւ ամոքող՝ համակված պատկերայնությամբ ու ինքնատիպ գուներանգներով: Այն նորություն ու թարմ խոսք է պոեզիայում: Տարբեր արտահայտչաձեւերով եւ այլաբանական պատկերներով բանաստեղծուհին հարկադրում է կարեւորն ու առանցքայինը փնտրել տողատակին՝ հանձնելով այն բանալին, որով բացվում է հեռու ու անհիշելի ժամանակների խորհրդավոր դարպասը՝ իմաստության դարպասը:**

**«Այսօր, երբ արդի եվրոպական պոեզիան ողողված է կեղծ ու ծամածուռ մոդեռնիզմի հաճախ անարմատ ու անհասցե դրսեւորումներով, այդ համապատկերում սերբ բանաստեղծուհու ստեղծագործությունները առանձնանում են, դրանցից ճառագող լույսի ու հույսի, ազնվամտության ու արդարության շողերը, բարության սերմեր են սփռում ընթերցողի հոգում, ցրում է հազարամյակների մշուշը՝ մոռացությունից ոգեկոչելով քաղաքակրթության արժեքները»,- գրում է առաջաբանի հեղինակը: Եվ, իհարկե, անափ հույս ներշնչում ապագայի հանդեպ: Բանաստեղծուհին ավելի հեռուն է տեսնում՝ հայացքը հառելով սերբ ժողովրդի պատմության ամենադրամատիկ խաչմերուկներին՝ 1389 թվականի Կոսովոյի ճակատամարտին, շարունակում է ճամփորդել Բյուզանդիայում ու Հայաստան աշխարհում, որոնում ու գտնում է քաղաքակրթության ակունքները, քրիստոնեության՝ հրաշքով փրկված սրբալույս նշխարները: Նրա աչքից չեն վրիպում Հայոց մեծ եղեռնի անանց ու անամոք վերքերը, մարտիրոսությունների մեր դարավոր ուղին, նաեւ հաղթանակած ժողովրդի հպարտությունը, ազատագրված Արցախը:**

**Առաջաբանի հեղինակը՝ բանաստեղծ-թարգմանիչ Բաբկեն Սիմոնյանը հաճախ է առիթներ ունեցել Լյուբիցա Միլետիչի հետ զրուցելու հայերի ու սերբերի պատմական ճակատագրերի ընդհանրության մասին: Ամեն անգամ նրան զարմացրել է, թե երբ եւ ինչպես է Լյուբիցան հասցրել այդքան բան իմանալ Հայաստանի, նրա պատմության ու մշակույթի մասին: Ավելի քան քսան տարի առաջ, երբ նրանք ծանոթացան Բելգրադում, Միլետիչը մեծ ցանկություն հայտնեց այցելելու մեր երկիրը: Տարիներն անցնում էին, իսկ Հայաստանի հանդեպ նրա սերն ավելի էր խորանում: Սիմոնյանը, խոստումի համաձայն, կազմակերպեց նրա այցը: 2012 թվականին Միլետիչը առաջին անգամ այցելեց Հայաստան ու Արցախ: Արարատի երկրում նա տեսավ այն ամենը, ինչի մասին միայն լսել ու երազել էր: Ոգեշնչված մեր երկրի հիասքանչ պատկերներով, բանաստեղծությունների մի ամբողջ շարք գրեց, որոնցում հառնում են մեր սրբությունները՝ Արարատն ու Գառնին, Երեւանն ու Արցախը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցն ու Տրդատ արքան, մեր դարավոր վշտերն ու չսպիացող վերքերը, նաեւ՝ արյամբ սրբագործված հաղթանակները:**

**Նույն ցավով է գրում Լյուբիցա Միլետիչը թե կորուսյալ Կոսովոյի, թե մեր դարավոր կորուստների մասին: Այնքան հայաշունչ են Հայաստանին ու Արցախին նրա խոստովանությունները, որ մի տեսակ լեզուդ կարկամում է, մտորում ես՝ մի՞թե դրանց հեղինակը օտարազգի է: Թերեւս դա էլ առիթ հանդիսացավ, որ Բաբկեն Սիմոնյանը իր գրչընկերոջ՝ բանաստեղծ-թարգմանիչ Գագիկ Դավթյանի հետ ձեռնամուխ լինի Լյուբիցա Միլետիչի բանաստեղծությունների հայերեն գրքի ստեղծմանը: Գագիկ Դավթյանը ձեռքի տակ ունենալով Միլետիչի՝ Մոսկվայում լույս տեսած սերբերեն-ռուսերեն երկլեզու գիրքը, իր անթաքույց հիացմունքն արտահայտելով Լյուբիցայի պոեզիայի հանդեպ, մի ամբողջ շարք թարգմանեց, որ լույս տեսավ մամուլում: Սերբ բանաստեղծուհին, այնուհետեւ, ուղարկեց Հայաստանին նվիրված ստեղծագործությունների մի ամբողջ շարք, որը ոգեշնչեց երկու բանաստեղծներին, իսկ այդ ամենի արդյունքում էլ ծնունդ առավ Միլետիչի բանաստեղծություններն առանձին գրքով ներկայացնելու գաղափարը:**

**Լյուբիցա Միլետիչի «Արարատի հողմերը» ժողովածուն դարձավ գրական ինքնատիպ կամուրջ, խոսք՝ ուղղված ոչ միայն հայ եւ սերբ ժողովուրդներին, այլեւ քրիստոնեական աշխարհին, առողջ բանականությամբ առաջնորդվող բոլոր մարդկանց:**

**Նշենք նաեւ, որ գիրքը տպագրվել է պետական պատվերով, Երեւանում՝ ապրիլի 16-ից 21-ը կայանալիք Պոեզիայի միջազգային առաջին փառատոնի շրջանակներում, որին հրավիրված է մասնակցելու սերբ բանաստեղծուհին: Այդ օրերին տեղի կունենա նաեւ Լյուբիցա Միլետիչի «Արարատի հողմերը» գրքի շնորհանդեսը:**

ՌՈՒԲԵՆ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

# Հայ ծանրորդներին լուրջ փորձություն է սպասում

Ապրիլի 8-ին Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում կմեկնարկի ծանրամարտի Եվրոպայի հերթական առաջնությունը: Ի տարբերություն նախորդ տարիների, այս անգամ Հայաստանը մայրցամաքի առաջնությանը կներկայանա ընդամենը 3 ծանրորդով: Մրցահարթակ դուրս կգան Անդրանիկ Կարապետյանը (77 կգ) եւ գերծանրքաշայիններ Գոռ Մինասյանն ու Հայկ Հակոբյանը:

Ծանրորդների սակավաթվությունը հավաքականի գլխավոր մարզիչ Պողոս Պողոսյանը բացատրում է Լոնդոնի օլիմպիական խաղերում մեր փորձառու ծանրորդների անհաջող ելույթներով: Ուստի որոշվել է օլիմպիական ցիկլի հենց սկզբից ուշադրությունը բեւեռել մեր առավել հեռանկարային երիտասարդ ծանրորդների վրա՝ նրանց հնարավորություն ընձեռելով արդեն այժմվանից մասնակցելով մեծահասակների մրցաշարերին, նախապատրաստվել 2016-ին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ամառային օլիմպիական խաղերին: Անդրանիկ Կարապետյանն ու Գոռ Մինասյանը փայլուն հաջողությունների են հասել պատանեկան եւ երիտասարդական մրցաշարերում: Իրեն վատ չի դրսեւորել նաեւ Հայկ Հակոբյանը: Այնպես որ Եվրոպայի առաջնությունում էլ նրանցից սպասելիքներ կան:

Անցած տարի Անթալիայում կայացած Եվրոպայի առաջնությունում Հայկ Հակոբյանը գերծանրքաշայինների մրցավեճում երկամարտի 415 կգ (195+220) արդյունքով գրավել էր 6-րդ տեղը: Պոկում վարժությունում Հայկը 195 կգ-ով դարձել էր արծաթե մեդալակիր՝ միայն անձնական ավելի ծանր քաշի պատճառով ոսկին զիջելով վրացի Իրակլի Թուրմանիձեին:




Ինչպես Եվրոպայի նախորդ առաջնությունում, այս անգամ էլ Հայաստանը ներկայացված չի լինի կանանց մրցաշարում: Նախատեսվում էր Մելինե Դալուզյանի մասնակցությունը: Սակայն նա ծնկի վնասվածք ունի, ուստի նպատակահարմար գտնվեց, որ Մելինեն չմասնակցի, այլ շարունակի նախապատրաստվել աշնանը կայանալիք աշխարհի առաջնությանը: Մինչ այդ, նախատեսվում է Մելինեի մասնակցությունը Կազանում հուլիսին կայանալիք համաշխարհային Ունիվերսիադային:

Եթե Եվրոպայի մեծահասակների առաջնությունում Հայաստանը միայն 3 ծանրորդով է հանդես գալու, ապա ապրիլի 8-ին Տաշքենդում մեկնարկող աշխարհի պատանեկան առաջնությունում մեր հավաքականները մրցումներին կմասնակցեն ամբողջական թիմով: Աղջիկների մրցաշարում մրցահարթակ դուրս կգան Ծովինար Կիրակոսյանը (58 կգ), Աղունիկ Հակոբյանը (63 կգ), Ռոզալիա Ավետիսյանը (63 կգ), Սոնա Պողոսյանը (69 կգ), Տաթեւիկ Հակոբյանը (69 կգ), Արեւիկ Միրզախանյանը (+69 կգ) եւ Հռիփսիմե Պողոսյանը (+69 կգ):

Պատանիների մրցավեճին կմասնակցեն Մարզպետ Մինասյանը (50 կգ), Դավիթ Գասպարյանը (56 կգ), Ժորժ Եղիկյանը (69 կգ), Արթուր Սարգսյանը (69 կգ), Սամվել Գասպարյանը (77 կգ), Հովհաննես Ավդալյանը (85 կգ), Սիմոն Մարտիրոսյանն (94 կգ) ու Աշոտ Բեգզադյանը (94 կգ):

# Մագնուս Կառլսեն. «Արոնյանից ավելի քիչ էի զգուշանում»



***Լոնդոնում անցկացված շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարի հաղթող Մագնուս Կառլսենն ընդարձակ հարցազրույց է տվել «Սպորտ-Էքսպրեսին»: Ներկայացնում ենք այն հատվածը, որտեղ նա մեկնաբանում է իր, Լեւոն Արոնյանի եւ Վլադիմիր Կրամնիկի ելույթները:***

Կարծում եմ, որ նորմալ խաղացի: Իհարկե, չհաջողվեց ամեն ինչ իրագործել, սակայն գլխավոր խնդիրը կատարեցի՝ մրցաշարի հաղթող ճանաչվելով: Իհարկե, երբ վերլուծում ես խաղացածդ պարտիաները, մշտապես հասկանում ես, որ ինչ-որ տեղ կարելի էր ավելի լավ քայլ կատարել, այլ վճիռ կայացնել: Ինձ դուր չեկավ այն, որ մրցաշարի վերջին օրը իմ բախտը վճռվեց մրցակիցներիս մրցավեճում: Նախկինում վճռորոշ պարտիաներում հաջող էի խաղում: Առաջին 11 տուրերի արդյունքներից գոհ եմ: Դրանցում եւս սխալներ կային, սակայն հիմնականում ես էի վերահսկում պարտիաների ընթացքը:

Վճռորոշ եղան ավարտական 3 տուրերը Իվանչուկի, Ռաջաբովի եւ Սվիդլերի հետ: Չէի ասի, թե իմ հնարավորություններից ցածր հանդես եկա: Սակայն եթե մեկնարկում կոպիտ սխալներից զերծ էի, ապա այդ պարտիաներում դրանք հետեւեցին մեկը մյուսին:

Հավանաբար պարզապես հոգնել էի, չէ՞ որ մրցակիցներն ուժեղ էին, լարվածությունն էլ ահռելի էր: Բացի այդ, 2-րդ շրջանում վերելքով սկսեց խաղալ Կրամնիկը: Թեեւ Արոնյանը որոշ ժամանակ գլխավորում էր աղյուսակը, նրանից ավելի քիչ էի զգուշանում: Այդ հարցում ես ճիշտ գտնվեցի: Լեւոնը գերազանց խաղաց մրցաշարի առաջին շրջանում, իսկ ահա 2-րդին ուժերը չբավականացրին: Դա էլ նրա պարտությունների պատճառը դարձավ: Իսկ Կրամնիկն ընդհակառակը, ավելացրեց, երբ մյուսների մոտ արդեն հոգնածություն էր զգացվում: Կարելի է ասել, որ Կրամնիկն իսկական հերոսություն դրսեւորեց:

Հավակնորդների մրցաշարի մասին իր կարծիքն է հայտնել նաեւ աշխարհի 13-րդ չեմպիոն **Գարի Կասպարովը**: Նրա կարծիքով մրցակարգը սխալ էր. հաղթողը պետք է որոշվեր լրացուցիչ գործակիցներով, այն էլ հաղթանակների քանակով: Ըստ Կասպարովի, անհրաժեշտ էր լրացուցիչ մրցախաղ անցկացնել Կառլսենի եւ Կրամնիկի միջեւ:

Կասպարովը նաեւ նշել է, որ մրցաշարը բացահայտեց Կառլսենի թույլ կողմերը: Դա վերաբերում է սկզբնախաղին եւ վճռորոշ պարտիաներին: Բացի այդ էլ, Կառլսենն ուժեղ մրցակիցների հետ պարտիաներում իրեն լավ չդրսեւորեց:

Կասպարովի կարծիքով, Անանդը փորձառու մարզիկ է եւ հնարավորություն ունի մրցախաղը լավ անցկացնել: Սակայն եթե Կառլսենին հաջողվի լավ աշխատել ու վերացնել թերությունները, ապա անպայման կհաղթի Անանդին: Որովհետեւ ներկայումս Կառլսենն Անանդից ավելի ուժեղ է խաղում: Նույնը վերաբերում է նաեւ Կրամնիկին:

Իսկ Լեւոն Արոնյանի ելույթի մասին Կասպարովը հետեւյալ կարծիքն է արտահայտել. «Արոնյանն ամուր չգտնվեց, նա պատրաստ չէր ուղեգրի համար մղվող պայքարին: Լեւոնը հավանաբար «կոտրվեց» դեռեւս 7-րդ տուրում, երբ չկարողացավ լավ դիրք ունենալով, հաղթել Գրիշչուկին: Իսկ Կառլսենը հրաշքով փրկվեց Ռաջաբովի հետ պարտիայում»:



# Մատիկոզյանը գրավեց 2-րդ տեղը

Armchess.am-ի տեղեկացմամբ, միջազգային վարպետ Անդրանիկ Մատիկոզյանը հաջող է հանդես եկել Լոս Անջելեսում անցկացված «25-րդ Մետրոպոլիտեն» մրցաշարում: Հայ շախմատիստը 10 հնարավորից վաստակած 6 միավորով զբաղեցրել է 2-րդ տեղը: Նա ընդամենը կես միավորով է հետ մնացել մրցաշարի հաղթող, ղազախ շախմատիստ Ջանիբեկ Ամանովից:

Միջազգային վարպետ Նորիկ Քալանթարյանն ու ՖԻԴԵ-ի վարպետ Հարություն Հակոբյանը վաստակել են 4,5-ական միավոր:

# Արմեն Այվազյանը բարելավում է դիրքերը

Անհաջող մեկնարկից հետո Սիդնեյի շախմատի մրցաշարի 4-րդ եւ 5-րդ տուրերում Արմեն Այվազյանը 2 անընդմեջ հաղթանակ տոնեց եւ 2,5 միավորով հանգրվանեց 38-րդ հորիզոնականում: Հայ շախմատիստի մրցակիցներն էին Գերմանիայի ներկայացուցիչ Իհսան Ֆերոզկոհին եւ ավստրալացի Ռովան Վիլաթգամուվան:

5 տուրից հետո միանձնյա առաջատարը հնդիկ գրոսմայստեր Սեթուրամանն է, որն ունի 4,5 միավոր: Նա հաղթեց Աթիլա Ժեբեին եւ ոչ-ոքի խաղաց Լի Զաոյի հետ: Առաջատարին կես միավոր են զիջում Չժաո Ցզուն-Յուանը, Լի Զաոն, Աթիլա Ժեբեն, Լեւենտե Վայդան, Լյուկ վան Վելին, Իժի Սթոցեկն ու Տինգլե Լեյը:

# Հայ սուսերամարտիկները կմասնակցեն աշխարհի առաջնությանը

Այսօր Խորվաթիայի Պորեչ քաղաքում կմեկնարկի սուսերամարտի աշխարհի պատանիների եւ երիտասարդների առաջնությունը, որին կմասնակցեն նաեւ հայ սուսերամարտիկները:

Հայաստանի հավաքականի կազմում ասպարեզ դուրս կգան ճկասուսերակիրներ Մայքլ Հովհաննիսյանն ու Էմիլ Դանիելյանը, խոցասուսերամարտիկներ Էդուարդ Հովիկյանը, Արթուր Քոչարյանն ու Լիլիթ Էլոյանը:

Մայքլ Հովհաննիսյանն ավելի վաղ էր մեկնել մրցավայր, որտեղ մասնակցում էր միջազգային համատեղ հավաքին: Նա իրեն լավ էր դրսեւորել փետրվարին Բուդապեշտում կայացած պատանիների եւ երիտասարդների Եվրոպայի առաջնությունում՝ 100 մասնակիցների մեջ զբաղեցնելով 22-րդ տեղը:

Էմիլ Դանիելյանը 2012-ին Երեւանում կայացած միջազգային մրցաշարի հաղթողն է: Լիլիթ Էլոյանն ու Էդուարդ Հովիկյանը Հայաստանի այս տարվա երիտասարդների չեմպիոններն են, իսկ Արթուր Քոչարյանը նույն մրցաշարում զբաղեցրել է մրցանակային 3-րդ տեղը:

# Անգլիական ակումբներից հաջողության հասավ միայն «Չելսին»



Կայացան Եվրոպայի լիգայի քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումները: Լոնդոնի «Չելսին» սեփական հարկի տակ 3-1 հաշվով պարտության մատնեց Կազանի «Ռուբինին»: «Չելսիի» կազմում աչքի ընկավ Ֆեռնանդո Տորեսը՝ դառնալով 2 գոլի հեղինակ:

Խաղից հետո թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին էր:

**Ռաֆայել Բենիտես** («Չելսի»)- Գոհ եմ արդյունքից, բայց ոչ 100 տոկոսով: Մենք գոլ բաց թողեցինք այն պահին, երբ վերահսկում էինք խաղի ընթացքը: Բոլոր ֆուտբոլիստներն էլ լավ խաղացին: Գոհ եմ Ֆեռնանդո Տորեսից, որը ոչ միայն գոլեր խփեց, այլեւ հաջող էր կազմակերպում խաղընկերների խաղը: Նա այժմ գլխավորում է Եվրոպայի լիգայի լավագույն ռմբարկուների ցանկը: Համոզված չեմ, որ մեր դարպասին նշանակված 11 մ հարվածն անվիճելի էր, սակայն ընդհանուր առմամբ մրցավարության որակից դժգոհ չեմ: Ես վստահ եմ մեր ընդհանուր հաղթանակի հարցում: Լավ ծանոթ էի «Ռուբինի» հնարավորություններին, որի կազմում կառանձնացնեի Նատխոյին եւ Ռոնդոնին:

**Կուրբան Բերդիեւ** («Ռուբին»)- Առաջին 15 րոպեներին մի փոքր վախ կար մրցակցի հանդեպ, հետո խաղադաշտում երկուստեք թեժ մրցակցություն ծավալվեց: 2-րդ խաղակեսի որոշ հատվածներում մեզ հաջողվեց վերահսկել խաղի ընթացքը, սակայն բաց թողած 3-րդ գոլը «կոտրեց» մեր ֆուտբոլիստներին: Իսկ «Չելսին» գործում էր իրեն բնորոշ ոճով: Պատասխան խաղում մեզ անհրաժեշտ է 2 գոլ խփել: Ուստի փոփոխելու ենք խաղի մարտավարությունն ու թիմի կազմը:

Անգլիական մյուս ակումբը՝ «Տոտենհեմը» սեփական հարկի տակ ոչ-ոքի (2-2) խաղաց շվեյցարական «Բազելի» հետ: Ընդ որում արդեն 34-րդ րոպեին դաշտի տերերը պարտվում է 0-2 հաշվով: Աչքի էին ընկել Շտոկերն ու Ֆրեյը: Մինչեւ ընդմիջում Ադեբայորը կրճատեց հաշիվը, իսկ 58-րդ րոպեին Սիգուրդսոնը վերականգնեց հավասարակշռությունը:

Եվրոպայի լիգայի մրցաշարում Անգլիայի 3-րդ ներկայացուցիչը՝ «Նյուքասլն» անհաջող խաղաց՝ 1-3 հաշվով պարտվելով Լիսաբոնի «Բենֆիկային»: Ընդ որում «Նյուքասլն» արդեն 12-րդ րոպեին Սիսեի հարվածով բացել էր հաշիվը:

Թուրքական «Ֆեներբահչեն» սեփական հարկի տակ 2-0 հաշվով առավելության հասավ իտալական «Լացիոյի» նկատմամբ: Պատասխան հանդիպումները կկայանան ապրիլի 11-ին, որոնք էլ կորոշեն կիսաեզրափակիչի մասնակիցներին:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար անցկացվող «Երևանը համայն հայության մայրաքաղաքն է» թեմայով լավագույն գրական ստեղծագործության IX միջազգային մրցույթի

# ԿԱՐԳ

### 1. Ընդհանուր դրույթներ

Ներկա դրույթները սահմանում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար անցկացվող IX միջազգային մրցույթի նպատակն ու խնդիրները, ինչպես նաև նրա անցկացման կարգը

Մրցույթի թեման է «**Երևանը համայն հայության մայրաքաղաքն է**»: Մրցույթն անց է կացվում «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության, «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական կազմակերպությունների միջազգային միության, ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

Մրցույթն անցկացվում է 2013 թվականի **մարտի 15-ից մինչև հունիսի 15-ը**

Մրցույթի արդյունքները կամփոփվեն և կհրապարակվեն 2013թ. սեպտեմբերին, իսկ հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը կկայանա հոկտեմբերին:

### 2. Մրցույթի նպատակը

Մրցույթի նպատակն է Հայաստանի, Արցախի և հայկական սփյուռքի սովորող երիտասարդությանն ավելի մոտիկից հաղորդակից դարձնել հայոց մայրաքաղաքի՝ Երևանի հինավուրց ու նոր պատմությանը, զարգացման հեռանկարներին, Հայաստան – Սփյուռք գործակցության ամրապնդման, աշխարհով մեկ սփռված հայությանը համազգային շահերի շուրջ համախմբման գործընթացներում քաղաքամայր Երևանի նոր դերակատարմանը:

Ցանկալի է, որպեսզի մրցույթի մասնակիցներն իրենց աշխատանքներում անդրադառնան Երևանի, որպես աշխարհի հնագույն քաղաքներից մեկի պատմությանը, ներկայացնեն նոր Երևանի վերաբերյալ իրենց տեսլականը ոչ միայն որպես անկախ Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն, այլև դիտարկեն այն որպես յուրաքանչյուր հայի սրտում միակ հայրենիքի, մայր հողի մարմնացման խորհրդանիշ:

Սփյուռքում ծնված ու մեծացած երիտասարդներն իրենց աշխատանքներում պետք է գործնականորեն ցույց տան այն դերը, որն այսօր խաղում է Երևանը նրանց ազգային ինքնագիտակցության զարթոնքի գործում:

Մրցութային աշխատանքը պետք է արտացոլի յուրաքանչյուր մասնակցի, անկախ բնակության վայրից, պատկերացումները նոր Երևանի կերտման գործում իր դերակատարման վերաբերյալ, ինչպես նաև անձնական խոհերն ու հույզերը նրա ապագայի մասին: Պետք է հստակ ցույց տալ, թե ինչպիսին կարող է լինել հայ երիտասարդության ներդրումը Հայաստանի հզորացման, տնտեսական և մշակութային ներուժի ամրապնդման գործում:

### 3. Մրցույթի մասնակիցները

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և հայկական սփյուռքի բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներն ու դպրոցների բարձր դասարանի աշակերտները: Մրցույթին կարող են մասնակցել նաև այլազգի սովորող երիտասարդության ներկայացուցիչներ

#### Մրցույթի պայմանները

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մրցույթին մասնակցել մեկ ստեղծագործությամբ, որը կարող է լինել ինչպես չափածո, այնպես էլ արձակ ստեղծագործություն (բանաստեղծություն, պատմվածք և այլն):

Մրցույթին մասնակցելու իրավունք են ստանում թեմային և նշված ծավալին համապատասխանող աշխատանքները Վերոնշյալ պահանջներին չհամապատասխանող գործերը ենթակա չեն քննարկման:

### 4. Մրցույթի կազմակերպման կարգը

Մրցույթը ղեկավարելու նպատակով ստեղծվում է Կազմկոմիտե, որը որոշում է մրցույթի անցկացման ժամկետները, կարգը, ձևավորում մրցութային հանձնաժողով և ամփոփում մրցույթի արդյունքները

Մրցութային հանձնաժողովը

❖ մշակում է աշխատանքների գնահատման չափանիշները

❖ ստուգում և գնահատում է աշխատանքները

❖ սահմանում է մրցանակային տեղերը և անվանակարգերը

❖ որոշում է մրցույթի հաղթողներին և ցուցակը ներկայացնում Կազմկոմիտեի քննարկմանը

Մրցույթի Կազմկոմիտեին իրավունք է վերապահվում անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել մրցույթի անցկացման կարգում

Մրցույթի արդյունքներն ուսանողների և աշակերտների համար կամփոփվեն առանձին-առանձին, յուրաքանչյուրին հատկացնելով երեքական տեղ:

### 5. Հաղթողների պարգևատրումը

Մրցույթում առաջին երեք տեղերը շահած թ՛ե ուսանողները և թ՛ե աշակերտները կպարգևատրվեն «Notebook» համակարգիչներով և դիպլոմներով, իսկ առանձին անվանակարգերում հաղթողները՝ արժեքավոր նվերներով և պատվոգրերով

### 6. Մրցութային աշխատանքին ներկայացվող պահանջները

Մրցութային աշխատանքները պետք է ներկայացնել մինչև 2013 թվականի հունիսի 15-ը: Ներկայացվող աշխատանքները կարող են լինել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ համակարգչային 4 - 5 էջի սահմանում:

Աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով Word ֆորմատով: Աշխատանքները կարող են ներկայացվել նաև անձամբ կամ ուղարկվել փոստով

Մրցութային աշխատանքին պարտադիր է կցել մասնակցի անձնական տվյալները պարունակող տիտղոսաթերթ.

- Ազգանուն
- Անուն
- Հայրանուն
- Ծննդյան թիվը
- Բնակության հասցեն
- Հեռախոսը
- Էլեկտրոնային փոստի հասցեն
- Ուսումնական հաստատության անվանումը, վայրը, հասցեն և հեռախոսահամարը:

Աշխատանքները կարող են ներկայացվել մրցույթի կազմակերպիչների հասցեով՝

**Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի հայաստանյան մասնաճյուղ**
Երևան, Տերյան 69
Հեռ. (37410) 51 04 42
(37410) 51 04 43
(37410) 51 04 40
Ֆաքս (37410) 51 04 41
Էլ. փոստ՝ **vladis@netsys.am**

կամ

***ՀՀ սփյուռքի նախարարություն***
*ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան 26/1*
*Էլ. փոստ՝ allarmenian@mindiaspora.am*

***ՀՀ կրթության և գիտության նախարարություն***
*ՀՀ, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարության III շենք, 611 սենյակ*
*Էլ. փոստ՝ kgnhanrakrtutun@mail.ru*

***Մրցույթի կազմկոմիտե***

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ

1.Արտասահմանյան գրականության ամբիոն բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. Հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

Հավակնորդները համալսարանի անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում.

▼ դիմում ռեկտորի անունով

▼ կադրերի հաշվառման անձնական թերթիկ

▼ ինքնակենսագրություն

▼ քաղվածք աշխատանքային գրքույկից

▼ համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով

▼ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

▼ գիտական աստիճանը եւ գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,

▼ տպագրված գիտական եւ մեթոդական աշխատանքների ցուցակը,

▼ տվյալներ պարգեւների, մրցանակների եւ պատվավոր կոչումների վերաբերյալ:

▼ անձնագրի եւ սոցիալական քարտի պատճենը:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը մեկ ամիս է՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Մանկավարժական համալսարանի գիտական քարտուղարին:

Հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 17, 301սենյակ:

Հեռ՝ 59-70-28:

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. ապրիլի 8-ին, ժ.16.00 ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում (Բաղրամյան 24) տեղի է ունենալու Համաշխարհային հայկական կոնգրեսի Գլխավոր խորհրդի նիստ: Նիստը վարելու է Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրամյանը:

Օրակարգում՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի 2013թ. տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումն է:

Կազմակերպության ծրագրային գործունեությունը առավել ընդգրկուն եւ համակողմանի դարձնելու նպատակով քննարկման են դրվելու նաեւ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված՝ Հոգաբարձուների խորհուրդ եւ Ծրագրերի իրագործման հիմնադրամ ստեղծելու հարցերը:

***Համաշխարհային հայկական կոնգրեսի մամլո ծառայություն***

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ կազմակերպիչ) կողմից կազմակերպված ընդհանուր բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու են Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը, ըստ ներկայացված հերթականության՝

Բնակարան, ընդ. մակերեսն է՝ 61.9ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Աջափնյակ համայնք, 16 թաղամաս, շենք 43, բնակարան 29: Լոտի մեկնարկային գինը՝ 11500000 ՀՀ դրամ:

Բնակելի տուն, ընդ. մակերեսն է՝ 316.9ք.մ, հողամաս՝ 0.222հա, բաց պատշգամբ՝ 65.9ք.մ, ավտոտնակ՝ 23.2ք.մ, մառան՝ 11.9ք.մ, թոնրատուն՝ 18.2ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Բամբակաշատ, Կենտրոնական փողոց, թիվ 88: Լոտի մեկնարկային գինը՝20000000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գների 2%-ի չափով, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին (ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով՝ 23.04.2013թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 25.04.2013թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գների իջեցումով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտերը կարող են ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

**ՀՊՃՀ**
**(ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)**
**մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:**

*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*
**ՍԱՐԻ ԹԵՅ**
ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ
**ԸՆՏԻՐ ԹԵՅ**
25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ
MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ
առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը
**Մեծածախ գնումների համար զանգահարել** 47-27-20, 47-03-63

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 5.4.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: